ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ

Եղեգնատուն

3-4

(222-223) Մարտ-ապրիլ 2025

«ՔՈՆՆ Է ԳԱՐՈՒՆԸ ՁՅՈՒՆԵՐԻՑ ՄՆՎԱԾ...»

(Հովհ. Շիրազ «Գարնանամուտ» - 1935-2025)



Ձյունը լալիս է, ձմեռն է մեռնում,
Ձյան անցած ճամփով՝ զվարթ ու անվիշտ
Գարունը գալիս՝ աշխարհն է բռնում...
Երանի մեռնող ձյուներին, որ միշտ
Հետևից կանաչ գարուն են թողնում:
Ձյունը լալիս է, ձմեռն է մեռնում,
Ձյան անցած ճամփով՝ զվարթ ու անվիշտ
Գարունը գալիս՝ աշխարհն է բռնում...
Երանի մեռնող ձյուներին, որ միշտ
Հետևից կանաչ գարուն են թողնում:

Շիրազյան տողը՝ զգայուն, վերթևումի, ոգու զարթոնքի խորհրդանիշ՝ երեկ՝ սրանից ուղիղ ինը տասնամյակ առաջ, այսօր և այսուհետև՝ հար...

«1930-ական թվականների բանաստեղծության հայտնությունը, իհարկե, Հովհաննես Շիրազն էր, որի «Գարնանամուտ» /1935 թ./ և «Երգ Հայաստանի» գրքերը հռչակում էին կյանքի ջահելության և հավերժության միտքը»,-նշում է գրականագետ Սուրեն Աղաբաբյանը:

Հովհաննես Շիրազի բոլոր տողերի մասին՝ առանց չափազանցության, արդեն բազմաթիվ էջեր են գրվել: Մեր խոսքը թող լինի որպես գարնանամուտի յուրովսանն կանչ ու բնանկար՝ մինչև այս գրված հազարավոր տողերի հարուստ ու ամբողջական հենքի վրա՝ ի հավելումն:

Ահա «Շիրազի բանաստեղծությունները՝ աշխարհի «գարնանացման» աշխարհզգացական տարերքով» /Ս. Աղաբաբյան/: «Նորից գարուն է»,-արդեն վաղուց անմահացած բանաստեղծը, որ սավառնում է արծիվների հետ և կայծակների հետ մարտի ելնում, ի վերջո սիրտը երկնքի սրտին, ծուլվում է Աստծուն՝ սարերին համածույլ հավերժանալու. «Քանի որ կյանքս մի վայրկյան է լոկ, // Եվ իմ դեմ աշխարհն՝ հավիտենական...»,-ասում է նա:

Գրողը դիմում է մայր բնությանը՝ իբրև մեծագույն փրկչի, թե հայտնի հեքիաթի նման դեռ չի ցամաքել գոհարներ լալուց:

«...Որ բեկվի իմ դեմ խորհուրդը մահվան, // Որ մարդը ցնծա հավերժի բախտով: // Եվ ես երջանիկ կլինեմ այնժամ, // Եվ գուցե այնժամ ես մահը սիրեմ, // Երբ անմահ լինեմ, երբ հավերժանամ, // Երբ գարունները ողջ թագավորեմ»: Թվում է՝ այլևս չեն մնացել բառեր՝ արտահայտելու այն ամբողջ հմայքն ու հիացքը, որ բերում է Հովհաննես Շիրազի «Թագադրում» բանաստեղծությունը՝ որպես իրապես երգերի լուսաբաց ու լեռների գարուն:

Տրամաբանական է, որ երկինքը հոգու մեջ և արևը աչքերին բանաստեղծը ամեն-ամեն ինչ հայ ոգուն և հայ հողին է կապում. «Հանգչի՛ր, արեգա՛կ, նրանց ճամփեքին՝ // Ովքեր իմ հայոց վիշտն են հեղեղել...»: Նրա գարունն էլ, ծաղկունքն էլ, զարթոնքն էլ մեն մի ակունք-հանգրվան ունեն՝ սերն է առ հայրենին: Անանձնական, անկրկնելի, շիրազյան սերը՝ իրեն՝ մի պտղունց, աշխարհներին՝ մի մեծ չկոտորակվող ամբողջ՝ հարաբերությամբ. «Գարո՛ւն, արևդ տար աշխարհներին, // Ինձ մի մանուշակ թող մնա միայն...»:

Արև, երկինք ու լույս, գարուն ու զարթոնք, ուժ, հոգևոր ճիչ ու կանչ՝ առաջին հերթին, որ կրկին կապվում է հայ ոգու հետ, իսկ վերհառնող արժեքները՝ կյանքի՝ մարդու արժևորման հետ, որոնք միով բանիվ, միտված են դեպի համամարդկային արժեքները՝ վեհորեն, հասկանալի և նույնքան մարդկային:

«Մենակությունս թողած լեռներին, // Իմ սուրբ գանձերով աշխարհ եմ իջնում»,-ապա վայրէջքը նրա՝ իմաստուն այնքան, որքան ինքնին միտքը լեռներից իջնելու, թե լավ է հալվել, քան մնալ ձյուն՝ այն դեպքում, երբ կյանքի հովտում սպասում է մարդը պապակ-ծարավ: Ամփոփումը իրեն բնորոշ՝ աֆորիստիկ մտքով է. «Ինչ որ քեզ պահես, հենց այն է կորած, // Ինչ տաս աշխարհին, այն քոնն է հավետ...»:

Մեկ այլ ստեղծագործության մեջ կրկին նա է՝ ամեն կարիքավորին սատար կանգնելու պատրաստ բանաստեղծը. «Լռությունն ինչպե՞ս թողնեմ մեն-մենակ, // Ո՞ւմ հետ մտորի լռությունն անհուն»:

Մեկ էլ մի ամբողջ բանաստեղծություն՝ բողոք բնությանը՝ «Հավերժը քեզ, վայրկյանն ի՞նձ» վերտառությամբ, թե «Այդ ինչպե՞ս ես ժամանակը բաժանել»:

Կյանքի նորացումն ու ափսոսանքը այլևս անվերադարձ կորցրածի՝ անցյալի հանդեպ. «Սիրտս՝ ալևոր կաղնու մեջ դրի, // Կռացած կաղնին նորից բողբոջեց, // ... Եվ մատաղ սիրտս՝ ճախրանքի ծարավ // Ձառայալ արծվի կրծքի տակ դրի, // Մեռնող արծիվը թև առավ, թռավ // Որսի հետևից ջահել օրերի...»

Ի՞նչ է արդյոք մատնացույց անում հեղինակը՝ մա՞հը /«ի՞նչ մահ, սի՛րտ իմ, երբ իմ երգով ոչ մի մահի չհասա»/, թե՞ պարզ մի... անմահություն: Թեև առկա է հակադրամիասնությունը. «Մահից հետո ի՞նչ եմ անում անմահությունն անմարմին», և «...Մահվան մասին՝ անմահությունն անգամ ահով է խոսում:

Ակնհայտ է շիրազյան կենսափիլիսոփայության գագաթը՝ անմահություն կենդանության օրոք, մի բան, որ հաստատումն է այս առումով նրա հետ կապվող կյանք-իրականության, և բանաստեղծի խոսքը մերթ համամարդկայինից հասնում է սեփական ցավին, մերթ էլ՝ հակառակը՝ անձնականն է վերածվում համամարդկային կերպի՝ ընդհանրացնելով. խորհուրդ՝ ուղղված մեծ աշխարհին՝ հստակ հաղորդագրության տեսքով:

«Իմ բարի, իմ ջերմ, հարազատ իմ մայր, // Իմ բարի արև, ես քեզ եմ սիրում, // Քեզ եմ երազել կարոտով անծայր // Իմ խեղճ մանկության անլույս օրերում: // Դու անհուն բաժակ, իմ հոգու ոլորտ, // Ես՝ վայրկյան, իսկ դու՝ հավիտյան ճամփորդ» /«Արևին»/:

Իսկական բնանկար է «Մայր բնություն՝ Աստծո քնար վիթխարի» բանաստեղծական կտավը: Ինքնատիպ երկխոսության մեջ մտնելով բնության հետ՝ գրողը տալիս է հռետորական հարցը. «Ասա, թե Երգ երգոցդ մարդն է՝ ինչո՞ւ մահ ունի»:

«...Երանի՜ մեռնող ձյուներին, որ միշտ
Հետևից կանաչ գարուն են թողնում»:

Կարինե ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Բան. գիտ. թեկն., դոցենտ

ԿՏԱԿ

Որդիս, քեզ ի՞նչ կտակեմ, ի՞նչ կտակեմ, իմ բալիկ,
Որ ինձ հիշես վշտի մեջ, թե խինդի մեջ քո գալիք.
Գանձեր չունեմ, բայց գանձն ի՞նչ, գանձը լույսն էր աչքերիս,
Դու ես միակ իմ գանձը, դու ես գանձը գանձերիս:
Քեզ այնպիսի գանձ կուզեմ ես կտակել հայրաբար,
Որ չի կարող կտակել ուրիշ երկրում ոչ մի հայր, -
Ես քեզ այն եմ կտակում, որին այս մեծ մեր դարում
Փոքրիկ մարդիկ են բանտել ու շղթայել ամպերում.
Քեզ մեր սարն եմ կտակում, որ դուրս բերես սև ամպից,
Որ տուն բերես շալակած արդարությամբ մեր անբիծ,
Ու կբերես, իմ բալիկ, թեկուզ քո խեղճ թաթիկով
Մեր սարն այս կողմ շուռ կտաս՝ արդարությանդ ուժն է ծով,
Ու երբ բերես, իմ բալիկ, սիրտս էլ շիրմից կհանես,
Կբարձրանաս ու սիրտս ազատն ի վեր կտանես
Ու կթաղես իմ սիրտը ձյուների տակ Մասիսի,
Որ շիրմում էլ՝ դարավոր հուր կարոտից չմրսի:

Քեզ Մասիսն եմ կտակում, որ դու պահես հավիտյան,
Որպես լեզուն մեր հայոց, որպես սյունը քո հոր տան:

***

Երկնքի սպիտակ, սպիտակ շուշաններ,
Իջնում եք անշշուկ, իջնում եք ձյուն դառած,
Իջնում եք՝ պարուրում անտառներ ու դաշտեր,
Ու ծածկում իմ աչքից ձորերն իմ թափառած:

Թափվեցե՛ք, իմ ձյուներ, երազներ քնքշաթով,
Թափվեցե՛ք, ծածկեցե՛ք ձորերն իմ հուշերի,
Ա՜խ, հուշերն ինձ անգամ խոցում են շշուկով,
Հուշերիս քուն բերեք մոռացման գիշերի:

Ես ամեն ինչի մեջ նրան եմ տեսնում դեռ,
Ոտքերի հետքերն եմ նշմարում քարերին,
Փռեցե՛ք մոռացման սավաններն, իմ ձյուներ,
Նրա հետ թափառած իմ բոլոր ճամփեքին:

Թող իջնի մազերիս ձմեռը տխրաձայն,
Միայն թե մոռանամ, հեռանամ հուշերից,
Ա՜խ, իմ դառն հուշերը չպիտի քաղցրանան,
Թեկուզև մազերիս ձյունն իջնի՝ ծածկի ինձ...

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ-ԼԵՆԻՆԱԿԱՆ-ԳՅՈՒՄՐԻ ՆԵՐՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԹԱՂԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գյումրին Հայաստանի ուրույն դիմագիծ ունեցող այն քաղաքն է, որի ստեղծման, կայացման ու զարգացման գործընթացը ներկայացված է բազմաթիվ ու բազմաբնույթ աղբյուրների, գիտական ու հանրամատչելի գրականության մեջ: Ի սկզբանե կառուցվելով որպես ստրատեգիական նշանակություն ունեցող ու քաղաքաշինական հստակ հատակագծով քաղաք, նրա տարածքն անընդհատ մեծացել է ինչպես ժողովրդագրական, այնպես էլ տնտեսամշակութային ու քաղաքական տարբեր գործոնների ազդեցության բերումով:

Քաղաքային մշակույթի յուրահատկությունների առումով Գյումրին հստակ տարբերակվում է իր պատմական զարգացման երեք փուլերով, ինչն արտահայտված է քաղաքին տրված երեք անվանումների մեջ: Ըստ այդմ որոշակիորեն առանձնանում են քաղաքի տվյալ ժամանակաշրջանի համար բնութագրական տարածքային-կառուցվածքային կազմակերպման մի շարք հատկանիշները, որոնք արտահայտում են ինչպես պետական քաղաքականության մոտեցումներն այս հարցում, այնպես էլ դրանցում քաղաքային բնակչության մասնակցության աստիճանը:

XIX դարասկզբի Գումրին մի փոքրիկ գյուղ էր Չերքեզի ձոր (Չարքըզի ձոր) կոչվող վայրում: Աղբյուրների հավաստմամբ 1804 թվականին, երբ ռուսական կոզակային առաջին խմբերը մտան Գումրի, գյուղի շրջակայքն ամայի էր: Այստեղ տեղակայված կոզակային սահմանապահ կայազորի զինվորների համար բնակավայրի հարավային կողմում կառուցվեց բնակելի թաղամաս, որը հայտնի է «Կազաչիյ պոստ» անվամբ: Կարճ ժամանակ անց այստեղ ստեղծվեց լավ ամրացված սահմանային կայան, որում տեղակայված էր ռուսական բավականին մեծ կայազոր:

1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ Գումրին դարձավ ռուսական զորքերի գլխավոր հենակայան (ֆորպոստ), իսկ պատերազմի արդյունքները և նոր բնակավայրի՝ Ալեքսանդրապոլի հիմնադրման սկիզբը դարձան:

Ժամանակակիցների վկայությամբ՝ XIX դարասկզբին Գումրի գյուղն ուներ մի հին եկեղեցի, իսկ տարբեր թաղամասերում բնակվում էին մոտ 30 տուն պարսիկներ և 20 տուն պարսկահպատակ հայեր: Ամրոցի կառուցումից հետո գյուղի բնակիչները ձորից աստիճանաբար բարձրացան բլրի վրա, որն էլ հետագայում դարձավ նոր ձևավորվող քաղաքի «Գեղցոց մահլեն» կամ «Ռանչպարների մահլեն» (թաղը): Նրանից ներքև ավելի ուշ առաջացավ քաղաքի հիմնական թաղամասերից մեկը՝ «Չորի բողազը», որտեղ հաստատվեցին պատերազմներից ու զրկանքներից այս ու այն կողմ ցրված արևմտահայերը, որոնք, ձգտելով ապահով ապրել ռուսական հովանավորության ներքո, տեղափոխվեցին այստեղ:

Մինչև 1837թ. Գումրին նեղ, ծուռումուռ փողոցներով, փողոցահայաց բութ ու «կույր»՝ առանց պատուհանների տուֆաշար պատերով ցածրիկ տներ ունեցող բնակավայր էր: Հետագայում այն կառուցվեց կանոնավոր հատակագծման սկզբունքով, նկատի ունենալով, որ նոր քաղաքը կառուցապատվելու էր մի ազատ, համարյա հարթ տարածության վրա, որն ընկած էր հին Գումրիից դեպի արևելք: Որոշ շեղությամբ հյուսիսից-հարավ և արևելքից-արևմուտք ձգված փողոցների ուղղանկյուն ցանցով քաղաքի տարածությունը բաժանվեց մեծ (100 x 150 մ) և փոքր (50 x 75 մ) թաղամասերի, որոնց փողոցները համարակալվեցին: 1870-ական թթ. սկսած՝ համարակալած որոշ փողոցներ ստացան անվանումներ, օր.՝ Ալեքսանդրովսկայա, Լոռիս-Մելիքովսկայա, Բեյբութովսկայա և այլն:

Ներգաղթյալների տեղավորման կոմիտեն նորեկներից պահանջում էր կառուցել հարմարություններով օժտված տներ՝ հաստատված ճակատամասով (ֆասադով), ուղիղ գծի վրա և թողնել «երեք սաժեն լայնությամբ» (մոտավորապես 6,5 մետր) փողոցներ: Օգտվելով ռուսական կառավարության տված վերոհիշյալ արտոնություններից և ընձեռած հնարավորություններից՝ արևմտահայ գաղթականները սկսեցին տներ կառուցել Գումրիում: Աստիճանաբար առաջացան քաղաքի հիմքը հանդիսացող թաղամասերը: Ի դեպ, սկզբնական շրջանում սրանք ձևավորվեցին տարերայնորեն ու առանց քաղաքաշինական որոշակի ծրագրի, և բնակչությունը դրանցում ինքնաբերաբար տեղաբաշխվեց ըստ էթնիկ, ներէթնիկ պատկանելության, ըստ դավանանքի կամ նույնիսկ ըստ զբաղմունքների:

Այսպես է նկարագրում քաղաքի կառուցապատումը 19 դ.վ. հասարակական գործիչ Կարապետ Կոստանյանը. «Նորագաղթ ժողովուրդը գրավեց այդ ձորերի ներքին մասերն այսպես. կարսեցիք նստան Գիւմրիչայի միջին հոսանքի աջ ու ձախ կողմը, բռնելով և բլուրների շուրթերն ու կատարները, ավելի հարուստ ու ազդեցիկ ընտանիքները ջրին ավելի մոտ, իսկ մյուսներն ավելի հեռու, այդ տեղում և շինվեցան Գիւմրիչայի ձախ ափին, համարեա ձորի կենտրոնում Ս. Աստվածածնի շատ ընդարձակ եկեղեցին, որ միակն էր բոլոր գաղթականների համար:

Արզրումցիք բռնեցին գլխավորապես արևելյան սարահարթի բարձունքը և Մուռտառ չայի հովիտը - նոցա թաղը եկեղեցուց հեռու է. կոչվում է Հողե պլան. հարուստ և ազդեցիկ ընտանիքները սակայն կարսեցւոց թաղումն էին, իսկ Հողեպլանը մնաց բաժին միջակ ու աղքատ դասին: Բայազետցիք նստան Գիւմրիչայի վերին հոսանքի աջ կողմը, խիտ բնակութիւն հաստատելով կարսեցւոց և հին գիւմրեցւոց մեջտեղը, նոքա թվով շատ չէին, բայց գրավեցին համեմատաբար ավելի ընդարձակ տեղ և սարքուեցան այնպես, որ ամեն տուն ուներ իր առանձին պարտեզը, մի բան, որ մյուս գաղթականները չունեին: Այդ թաղը կոչվում է Բայազցւոց մահլայ: Հոռոմ (Ուռում) գաղթականներ ևս կային Կարսից և Արզրումից եկած (մոտ 100 ընտանիք), նոքա էլ տեղաւորվեցան Հողեպլանում՝ Արզրումցիներից ներքև, իսկ սոցանից ցած դեպի բոստանների կողմը նստած են թուրքերը, շատ սակավաթիվ ընտանիքներ: Հայ կաթոլիկները (ֆռանկներ) նստան արևմտյան բլրի ստորոտներում և բարձունքներում դեպի ներքև (հարավ): Հոռոմներն ու ֆռանկներն ունեին իրենց մատուռները, Հոռոմների թաղում (Ուռմնոց) կար և փոքրիկ բաղնիք: Ֆռանկները մի մասով Արզրումցի էին թվով մոտ 200 ընտանիք»:

Դեռ դարի սկզբին այստեղ բնակություն հաստատած ռուս զինվորականներն ունեին իրենց թաղը, որը գտնվում էր քաղաքի հարավային մասում և կոչվում էր «Ռուսսկայա սլոբոդա» (տեղաբնակներն անվանում են «Սլաբոդկա»): Մոտ 40-50 տուն մահմեդականները Գումրու հարավարևելքում (այժմյան ավտոկայանից մինչև հին գերեզմանոց) հիմնեցին ,Թուրքի մահլեն»: Նրանց մասին հետաքրքիր հիշողություն է թողել աշուղ Խայաթ Զահրիյանը. «Աստվածածնա եկեղեցու մոտ թմբի վերա մի քանի թուրքի տներ կային… Թուրքերը տեսնելով, որ տեղի հայերի թիվը հետզհետե ավելանում է, թողին իրանց այդ հին տները քաշվան գնացին քաղաքից դուրս նոր շինություններ շինեցին, որին մինչև այսօր էլ անվանում են թուրքերի մայլա»: 30-40 տուն հայ բոշաները հիմնեցին «Բոշի մահլեն» (այժմյան Սայաթ-Նովա փողոցից մինչև նախկին հանրախանութ ընկած տարածքը):

Քաղաքաշինական աշխատանքներն Ալեքսանդրապոլում ավելի ընդարձակվում են XIX դարի երկրորդ կեսին: Կառուցապատման հիմքում ընկած էր Կովկասի փոխարքայի կողմից 1872 թ. սեպտեմբերի 9-ին հաստատված գյխավոր հատակագիծը, որը որոշ չափով ընդարձակում էր կառուցապատման ենթակա հողատարածությունը, ավելացնում միմյանց զուգահեռ և ուղղահայաց փողոցների ցանցը:

XX դարի սկզբին Ալեքսանդրապոլն ընդարձակվում է նաև զորանոցային թաղամասերի՝ «Կազաչի պոստի» (հարավից) և Սեվերսկու ու Պոլիգոնների հաշվին, որոնք կառուցապատվում են գերազանցապես սև երանգի տուֆով շինված միատիպ երկհարկանի տներով (մեծ մասամբ զորանոցներով ու այլ շենքերով): Համապատասխանաբար աճում է քաղաքի բնակչության թիվը: Քաղաքի կարգավիճակ ստանալուց հետո բնակչության թիվը եռապատկվեց և, ըստ 1897թ. մարդահամարի տվյալների, կազմեց 30 316 մարդ, որի 95% -ը՝ հայ:

Ցանկացած քաղաքի դիմագիծը լավագույնս ձևավորում և արտահայտում է տվյալ քաղաքի բնակչությունը: Բնակչության կազմում տեղի ունեցած փոփոխությունները մեխանիկորեն բերում են քաղաքի դիմագծի փոփոխությանը, իսկ մյուս երկու խնդիրները՝ արդյունաբերական և սոցիալ-պրոֆեսիոնալ կազմը ,պլանավորում են քաղաքային այն սոցիալական միջավայրը, որում ձևավորվում և իր օրինաչափություններն է ամրագրում քաղաքային բնակչությունը: Այսպիսով տեսնում ենք, որ Ալեքսանդրապոլ քաղաքի ձևավորման հիմքում, չնայած պետական հաստատված հատակագծի, թաղային բաժանումները կատարվեցին ըստ էթնիկական, ներէթնիկ խմբերի ու կոնֆեսիոնալ հատկանիշների, որոնք գերակայող էին նոր ձևավորվող քաղաքի կայացման մեջ:

Կարինե ԲԱԶԵՅԱՆ
Պատմ. գիտ. թեկն. , դոցենտ

ՄԱՅԼԻՑ ՄԱՅԼԱ

էն վախտերը ֆեյսբուկ չկար ու մարդիկ չէին տեսնի, թե ով ի՞նչ կուտե, ի՞նչ կհագնի, ո՞ւմ հետ է քիփ ու ո՞ւմ չոռնի քցած: Ըդոր հըմար էլ որոշեցի քրքրել մեր մայլեքի արխիվն ու էղած-չեղած մութ պատմությունները հանել թղթի երեսին, իհարկե հետո էլ ֆեյսբուքի պատ:

Լեննագանը հայտնի է իրա մականուններ կնքելու «վեհ» խասյաթով՝ ինչխոր ամեն մարդ ընդեղ մականուն ունի, ըդպես էլ իրա մայլեքը: Պասպորտով Հռիփսիմե ծնվածին կամ Օֆիկ կսեն, կամ Ըռիփ, նույն մեխանիզմով էլ Մազմանյան, Տերյան, Շահումյան փողոցները կդառնան սլաբոդկա, բոշի ու թուրքի մայլա: Ինչքան հայտնի է մայլի մականունը, ըդքան էլ հայտնի բդի էղներ ընդեղաց տղեքի մականունները՝ Խրտնած Խաչիկ, Լոճված Սահակ, Ժեշտ Հարութ, Ըշտը Վասիլ:

Մեր մայլեն իրա բնակիչներով նման չէր հեչ մե ուրիշ մայլի: Սաղ մէ խասյաթի էին, համայրա նույն կարգավիճակի ու չիդեմ ընչի արտաքնապես իրար նման: Դեմ դիմաց շարված դարբասներից ներս ամեն մեկն իրա ողբերգությունն ուներ ու էդ կողքի հարևանին շատ կոմիկ կթվար: Նար-Դոսի, Թումանյանի ու Սարոյանի հետ վաշբե կապ չունեինք, բայց մեր մայլեն ուներ իրա Սուսանն ու Սերյանը, Սաքոն ու Մարոն, Լեռնիկն ու Հայաստանը:

Սովետը էրգու լավ բան ուներ՝ ընտեղ ինտերնետ ու գործազուրկ չկար: Գործից հետո մարդիկ լիքը ազատ ժամանակ ունեին ու թե ինտիլեգետները կինո կերթային, բանվոր դասակարգը մայլի հըմար կինո կկազմակերպեր: Բանվորի ռոճիկը կհերիքեր ամեն օր չորս պիվա ու մէ հատըմ օղի գնելուն: Հազարից մեկ կեղներ օր ֆիզիկականը թույլ չէր տա էդ պրոցեսն առանց ընդմիջման ընդունելուն, բայց դա ընդհանուր պատկերը չէր փոխե: Հատուկ գրաֆիկ կար, օր մայլեն հեչ մէ օրըմ իրա խմողի կանցեռտներից չզրգվի: Ինչքան լայք կերթար ու կկորեր մեր մայլի պատերից, երբ համ կըգներ Բարութ Հարութի ու Դռել Ռազմիկի խմելու օրերը: Տնեցիք արդեն գիտեին գլխի գալիքները ու մշակված տարհանման պլանին հավատարիմ կվազեին Լեն Ռուզանենց տուն: Ռուզանենք էլ չէին բողոքե, որդև գիտեին, օր մեգել օրն իրանց կսպասվեր տարհանում: Զավոդի քրքնահոտը կխառնվեր օղու հոտին ու ինչխոր ցուլը կարմրից կխրտնի, ըդպես էլ իրանք տնեցոնցը տեսնելուց կկատղեին ու տապոռ կամ ատվյոռկա առած կընգնեին ետևներից: Կնգտանց կյանքը մեր մայլում տրագիկոմեդիա էր, մարդկանցը՝ մշտակպես կոմեդիա: Մե կատեգորիա էլ ունեինք՝ տղամարդ կնիգ: Իրանք դաժե խմած մարդկանցից էին վտանգավոր, որդև իրանց մոտ միշտ դուխը բարձր էր ու ըդոր հըմար օղի հեչ պետք չէր: Ամեն մայլա մէ հատըմ ըդպես կնիգ կար (շատի դեպքում պայթունավտանգ կեղներ մթնոլորտը): Անտեսանելի ձեռը հատուկ հավասար բաշխում էր էրել ու իրանց ֆեյքերը չէր ճարվի: Զատո իրանք միշտ սրտիկված ու լայքվածի տակ էին (տխուր ու դժգոհ դեմքերը իրանց մոտ շատ շուտ ջրի երես գելնեին ու տեսադաշտից կընջվեին): Մայլեքի տղամարդ-կնիգները ձեռի հետ համ էլ թաղի լիազորն էին: Եդ պաշտոնը ընտրովի չէր, բայց իրաք սաղի կողմից ընդունված էին, մանավանդ օր ձեռներն էլ կլոր պեչատ կար ու էդ պեչատը ցանկության դեպքում կռնար զենք դառնար խեղճ ու կրակ մեկի ճակատագրում: Փոքրերը կվախնահին իրանցից, իսկ մեծերը էլ ավելի շատ կվախենային: Ընձի կթվա թաղի տեսուչն էլ լիազորին կենթարկվեր, քանի լիազորը բողոք չէր տա իրա մայլից մարդ չէին բռնե: Հըմիկվա լեզվով իրանք մայլի ադմինն էին:

Էրեխեքը հատուկ դեր չունեին մայլեքի մեջ, բայց համարյա սաղ կռիվները իրացից դուս գուկար: Սովետի վախտ էրեխա սիրելն ամոթ բան էր, էնել սեփական էրեխուն: Պաչիկների սմայլները փակ էին խալխի աչքից, կարևորը կուշտ էղնեին, աչքի առաջ ու քեռու շորերի մեջը տեղադրված:

Մէ բանըմ էլ բդի փաստենք, օր էդ վախտերը մարդկանց հիշողությունները շատ լավ էին: Էդ ոչ թե էկոլոգիապես մաքուր սնունդ ընդունելուց էր, այլ ինտերնետի բացակայությունից: Սաղ անգիր կհիշեին քավոր-սանիկների ծնունդները, անցած տարի նույն օրը նշանվածի արարողությունը ու հատկապես զարմանալիորեն անջնջելի կֆիքսեին հարևանի հարսին տուն բերած տաքսու համարը: Աստված չէներ էդ համարը մէ երգու անգամ կրկնվեր, հարսին բարոյապես կաքսորեին տեքստիլի հանրակացարան:

Ու հեչ մեկի լայքին չնայելով կեռար կյանքը մեր մանր մայլեքի մեջ, սաղ իրանց բան ու գործն ունեին ու իրանց տեղին-դիրքին համապատասխան ստատուսներ էնելով կապրեին:

Լիլիթ ՄԿՐՏՉՅԱՆ

Նվեր
ՄԻՆԱՍՅԱՆ

Գիտե՞ս խոսքերն այն,
Որ կստիպեն ջրվեժներին
Հոսել դեպի վեր:
Իսկ ես մոռացել եմ արդեն
Շարունակությունն այն տողերի,
Որոնցով երգերս
պիտի ավարտվեին,
Ու չգիտեմ՝ ինչպես
քեզ ասել հիմա,
Որ տեսել եմ
զովանալը զեփյուռի,
Եվ լսել եմ թարմ
զրույցը ծաղիկների՝
Քո ներկայության ժամանակ:
Իսկ այժմ, երբ կողքիս չես դու,
Եվ մենակությունն է
մամլում իմ հոգին՝
Այնպիսին եմ, ասես վտանգավոր
Մի մառախուղ է անցել միջով իմ՝
Լցվելով երգերիս մեջ,
Ու բնությունն ամբողջ
Անշունչ կտավների մի
բազմություն է սոսկ:
Զգացե՞լ ես շունչն
այն առավոտների,
Երբ երջանկությունը
բարձրացնում է մեզ վեր,
Անգամ մեր երազներից,
Ու ստիպում է ջերմանալ
աշնանային անձրևներից,
Փարվել մառախուղին այնպես,
Ինչպես երազն է
գրկվում քնելուց առաջ:
Ու եթե դեռ չեմ ասել
խոսքերս բոլոր,
Ապա մառախուղն
է պատճառը երկի,
Որ անցել է միջով իմ
ու լցվել երգերիս մեջ:
Իսկ դու գիտե՞ս արդյոք
Խոսքերն այն բոլոր,
Որ կստիպեն ջրվեժներին
Հոսելու դեպի վեր,
Անգամ մեր երազներից…

***

Եվ ի՞նչ է մտածում վարդենին
Շոգ մենության մեջ:
Տանիքներից հոսում
է արևը հալված,
Բառերն հասել են շիկացումի,
Որից այն կողմ
լռություն է քարացած,
Եվ բառերը հալված՝
Հոսում են միջով լռության:
Եվ ի՞նչ մտածեց աղջիկն այն,
Որ չեկավ վարդենիների մոտ՝
Քարացած լռությունից առաջ,
Ինձ թողնելով մենակ՝
Հալված արևի և լռության մեջ
քարացած:

***

Մեր միջև քարացել
է լռությունն այնպես,
Ինչպես երազներն են
վառվում տաք հույզերի մեջ:
Հեռացել են զեփյուռներն
արշալույսների՝
Իրենց հետ տանելով
որպեսները հույզերի:
Մեր միջև քարացել են
արցունքներն իբրև խոսքեր,
Որ ժառանգվել էին
զեփյուռներից օրերի,
Եվ մատնաչափ
անգամ տեղ չի մնացել
Գեթ փետուրի համար
հրեշտակապետի:
Հիմա, երբ տիեզերքն այրվում է
Մեր ներկա բացակայությունից՝
Ճյուղերին ծառերի
անշարժացել են տերևները,
Որպեսզի հետևեն
ընթացքին ցավի:
Ուղղում եմ հայացքս
վառվող տիեզերքին,
Մի հայացք, որում
տեղ չկա անգամ
Քարացած բառերին արցունքե:

***

Գալիս է գարունը՝
Ծլվլոցներով հարավի,
Այդ քայլերն են խոնավ գարնան
Արձագանքվում հոգիներում,
Որ ծարավի են սիրո,
Եվ երգն է թռչունների,
Որ բազմել է շուրթերիդ,
Եվ դու, որ շեփորում ես
Սկիզբը հավերժության:
Դարձյալ մի կտոր
հավերժություն,
Որ նկարում է
գարունը հոգուս մեջ,
Աչքերդ են, որ թերթում
են երազներն հոգուս,
Եվ գոլորշին խոնավ հողի՝
Շնչառությունն է քո:
Այդ ժպիտն է քո՝
Նկարված սաղարթների
մեջ կանաչ,
Փայլն է աչքերիդ,
Որով զարդարվել է առավակը ջինջ:
Ո՞ւր է վազում առավակը
ջինջ հանգստից հետո-
Դեպի հավերժություն:
Եվ սերն է, որ
զարդարում է աշխարհը՝
Զուլալ խնդությամբ,
Ասես մի մանուկ, որ
զարդարել է տոնածառը՝
Ամանորից մի քիչ առաջ:

***

Օրը մթնեց՝
Փակելով հազարաթրթիռ
թևերն իր,
Ու վերջին անգամ թրթռացին
թևերը թիթեռնիկների՝
Նախքան հասնելը
հանգրվաններին իրենց:
Փակվեցին կակաչներն էլ ահա,
Գրկելով հույսերը
երազների հետ,
Ու ջանացին տեսնել
փայլը գալիք օրվա:
Հանդիպումից հետո
Դեռ շշունջներն են մեր խոսքերի,
Որ հպվեցին
մաքրությանը գիշերվա,
Շողերին աստղերի,
Եվ ավելի լուսավորվեց գիշերը,
Քան կարող էր լինել
ջանքով լիալուսնի:
Գտա՛նք զարկերակները
դաշտերի,
Եվ համաչափ
շնչառությունը հողի,
Գտա՛նք շարժումը
արմատի՝ հողի մեջ
Ու բարձրացան ծառերն ավելի,
Քան կարող էին լինել՝
Զգտելով աստղերին երկնքի:
Այդժամ զգեստեցին մեզ ժամերը
Դողերով իրենց երջանկության,
Զգացինք ցնծությամբ,
Որ անցել ենք արդեն
Սահմաններն հավերժի:

***

Եռանկյունաձև տառապանք.
Ոնց էլ շրջվեմª սայրեր են արդեն
Անկյունները բոլոր,
Որ խոցելու են անշուշտ:
Ստվերների հետքերն
եմ փնտրում
Վաղո՜ւց ասված
բառերի ու իմաստների,
Անցնում եմ դրանցից այն կողմ,
Ուր դաժան ցուրտն
է մոլեգնում միայն:
Եվ ինչպե՞ս գտնեմ
կղզին այն հրաշք,
Որ թվում էր առանց
սահմանների:
Մինչդեռ ողջ աշխարհը հիմա
Դարձել է մի փոքրի՜կ,
փոքրի՜կ զարդատուփի չափ,
Ու հորիզոնն անցնում
եմ իմ մի կիսով միայն:
Հաղթվեցի վերջապես
բառերից իմ իմացած,
Եվ հաղթվելուց հետո
աշխարհն աչքիս
Ավելի չքնաղ է,
Ավելի չքնաղ,
Քան զանգակաձաղիկներն
ամռանը,
Քան սրաքարերը առվակի միջի՝
Արևի փայլի տակ,
Քանզի կա հույսը,
որ վերածնվում է
Մահանալուն պես:
Ու թե խոցված եմ բոլոր սայրերով
Եռանկյունաձև տառապանքի,
Ապա միայն ու միայն
հույսի համար,
Եվ հաղթանակի:

***

Երբ տաք քամին
սեպտեմբերյան
Նորից կսկսի երջանկության
փնտրտուքն իր՝
Հովիտներում ու
դաշտերում դեղնած,
Սվսվոցով մեռնող խոտերի մեջ՝
Ես նորից կորոնեմ շա
րունակությունը
Իմ՝ դեռ չսկսված պատմության:
Ո՞ւր էիր դու, երբ քեզ էի
որոնում այսքան երկար,
Եվ ինչպե՞ս
հանգույցներ դարձան
Երազներն իմ՝ դեպի քեզ
բերող ճանապարհին,
Դո՛ւ, որ երջանիկ թախիծն
ես իմ հավերժական:
Եվ էլ ի՞նչ այսքանից հետո՝
Մի աղոթք՝ ուղղված
զորեղ քամուն,
Որ բերի իր հետ
շարունակությունն
իմ պատմության,
Որ քեզ բերի
ընդառաջ երազներիս,
Քեզ բերի հանգույցներով
լի ճանապարհով,
Որովհետև գալու է պահն այն,
Երբ քայլերը մեր
կլինեն իրար արժանի,
Որովհետև ի զորու ենք լսելու
Արցունքե խոսքերը բոլոր
Տխուր սվսվոցով
մեռնող դեղին խոտերի,
Եվ որովհետև դու
արդեն դարձել ես
Թախիծն իմ՝
Անձրևող երջանկության
արցունքներով լիուլի:

ԴԻՆՈ ԲՈՒՑԱՏԻ

ԱՇԽԱՐՀԻ ՎԵՐՋԸ

Մի առավոտ՝ մոտ ժամը տասին, մի հսկայական բռունցք հայտնվեց երկնքում՝ քաղաքի վրա. հետո դանդաղորեն բացեց ճանկերն ու այդպես մնաց անշարժ, ինչպես մի ահռելի չարագույժ ամպհովանի: Թվում էր՝ քարից էր, ու քար չէր, մսից էր, ու միս չէր, նաև թվում էր, թե ամպ էր, բայց ամպ էլ չէր: Դա Աստծո ձեռքն էր ու աշխարհի վերջը:

Մի շշնջոց, որ հետո տնքոցի վերածվեց, իսկ հետո՝ գոռոցի ու տարածվեց թաղամասերում, մինչև որ դարձավ հավաք ու ազդու մի ձայն, որը բարձրանում էր շեշտակի, շեփորի նման:

Լուիզան ու Պյետրոն այդ պահին գտնվում էին մի փոքրիկ հրապարակում, որը շրջափակված էր ֆանտաստիկ շենքերով, մասամբ էլ՝ պարտեզներով: Երկնքում մի անսահման բարձրությունից կախվել էր ձեռքը: Լուսամուտները լայնորեն բացվում էին կանչերի ու սարսափի գոռոցների միջև, մինչդեռ սկզբնական ձայնը քիչ առ քիչ սկսվեց: Ազնվազարմ երիտասարդ օրիորդները կախ էին ընկնում պատուհաններից աշխարհի վերջը տեսնելու համար:

Մարդիկ էին դուրս գալիս տներից՝ մեծ մասամբ վազելով. շարժվելու կարիք էին զգում, ինչ-որ բան անելու կարիք, սակայն չգիտեին՝ ուր խփեին իրենց գլուխները:

Լուիզան սկսեց հեկեկալ.

-Գիտեի, ախր… -մրմնջում էր նա հեկեկոցների միջև,-որ այսպես պիտի վերջանար…երբեք Եկեղեցի չգնացինք, երբեք աղոթք չարեցինք…զգում էի, որ վերջը սա էր լինելու…

Եվ ի՞նչ կարող էր Պյետրոն ասել նրան որպես մխիթարանք: Ինքն էլ սկսեց լաց լինել, ինչպես մի մանուկ: Նաև մարդկանց մեծ մասն էր լացուկոծը դրել, հատկապես՝ կանայք:

Միայն երկու միաբան եղբայրներ՝ երկու աշխույժ ծերուկներ, անսահման ուրախ տրամադրության մեջ էին:

- Հիմա ճարպիկ խաբեբաների վերջը եկա՞վ,-բացականչում էին այդ կայտառ ծերուկները՝ հրճվելով ու անցորդներին դիմելով:

Իսկ դուք երբևէ հրաժարվեցի՞ք ճարպիկ խաբեբաներ լինելուց: Հիմա մենք ենք ճարպիկները: Ու չարախնդում էին:

- Մենք միշտ տխմար եղանք, միշտ հիմար կարծեցին մեզ. դե հիմա կտեսնենք՝ ո՛վ էր մեզնից ավելի ճարպիկ:

Դպրոցականների պես քրքջալով՝ նրանք անցնում էին այդ աճող խառնաշփոթի միջով, որը նայում էր նրանց չար աչքով՝ չհամարձակվելով սակայն հակազդել: Արդեն մի քանի րոպե էր,

ինչ նրանք անհետացել էին ինչ-որ նրբանցքով, երբ մի պարոն, ասես բնազդային մղումով, սկսեց նրանց հետապնդել, ասես ձեռքից մի թանկարժեք առիթ էր բաց թողնում:

-Տե՛ր Աստված, - գոռում էր նա՝ խփելով իր ճակատին,-բայց չէ՞ որ նրանք կարող էին մեզ խոստովանեցնել:

-Գրո՛ղը տանի,-հաստատում էր նրա ասածը մեկ ուրիշը,- ի՞նչ ապուշն ենք: Նրանք մեր քթերի տակ էին, ու թողեցինք, որ գնան:

Բայց էլ ո՞վ կարող էր հասնել արագաշարժ միաբաններին:

Կանայք ու նաև անպատկառ տղամարդիկ այդ պահին վերադառնում էին Եկեղեցուց հայհոյելով, հիասթափված ու հուսալքված:

Լավագույն խոստովանահայրերն անհետացել էին,-ասում էին, հավանաբար, իշխանավորներն ու օլիգարխներն էին նրանց իրենցով արել: Չափազանց տարօրինակ էր, բայց փողը, դեռևս մի հրաշքով, պահպանում էր իր որոշիչ դերը, թեև աշխարհի վերջն էր վրա հասել. ո՞վ գիտե, գուցե համարում էին, որ իրենց տրամադրության տակ դեռևս կային րոպեներ, ժամեր, գուցե և՝ մի քանի օր:

Ինչ վերաբերում է մնացյալ խոստովանահայրերին, Եկեղեցում այնպիսի զարհուրելի խիտ հերթ էր գոյացել, որ էլ չասած: Խոսում էին լուրջ միջադեպերի մասին, որ տեղի էին ունեցել մարդկային այդ հոծ բազմության պատճառով. որոշ խաբեբաներ, հոգևորականի զգեստի տակ ծպտված, առաջարկում էին իրենց ծառայությունները՝ խոստովանություններ կորզելու համար, նաև տներում, պահանջելով առասպելական գներ: Երիտասարդ զույգերը հապճեպորեն առանձնանում էին՝ առանց այլևս ամոթխածության որևէ նշույլի, մեկնվելով այգիների խոտածածկ գետնի վրա՝ ևս մի անգամ սիրով զբաղվելու համար: Իսկ երկնքից կախված ձեռքը հողի գույն էր ստացել, չնայած արևը փայլում էր. և ուրեմն, ավելի շատ էր զարհուրանք պատճառում:

Սկսեց շրջանառվել մի լուր, թե աղետը անխուսափելի էր. ոմանք ասում էին, որ այն վրա էր հասնելու կեսօրից առաջ:

Այդ ընթացքում ինչ-որ շենքի նրբաճաշակ ոճով կառուցված մի պատշգամբում՝ խճուղուց մի քիչ բարձր (այնտեղ կարելի էր բարձրանալ աստիճաններով), տեսան մի երիտասարդ քահանայի: Գլուխն ուսերի միջև՝ նա առաջանում էր հապճեպով, ասես շտապում էր հեռանալ: Տարօրինակ էր քահանան այդ ժամին, այդ հոյակապ տան մեջ:

-Քահանա՜, քահանա՜ ,-գոռացին այս ու այն կողմից: Կայծակի արագությամբ մարդիկ կտրեցին նրա դեմը նախքան կհասցներ ծլկել:

-Խոստովանեցրո՛ւ մեզ, խոստովանեցրո՛ւ մեզ, -գոռում էին նրան:

Քահանան գունատվեց. նրան տարան այն փոքրիկ կրպակի մոտ, որը դուրս էր ելնում օթյակից, ինչպես ծածկված ամբիոն. թվում էր՝ հենց այդ նպատակով էլ սարքվել էր:

Տղամարդիկ ու կանայք անմիջապես հերթ կանգնեցին տասնյակներով՝ իրար հրշմշտելով, սուզվելով, զարդանախշերի ելուստներով մագլցելով, կառչելով սյուներից ու ճաղաշարից. ասենք, բարձրությունն այնքան էլ մեծ չէր:

Քահանան սկսեց լսել խոստովանությունները: Շատ արագ լսում էր անձկալի խոստովանությունները անծանոթ մարդկանց (որոնք այլևս չէին մտահոգվում, թե ուրիշները կարող էին իմանալ դրանք, թե ոչ): Դեռ չէին ավարտել, քահանան աջ ձեռքով խաչակնքում էր, թողություն էր տալիս ու անմիջապես անցնում հաջորդ մեղավորին: Բայց որքա՞ն էր նրանց թիվը: Քահանան շվարած չորսբոլորն էր նայում, մեղքերի այդ աճող մակընթացությանը, որոնց պիտի թողություն տրվեր: Մեծ ջանքերի գնով, նաև Լուիզան ու Պյետրոն կանգնեցին դրա տակ. հասավ իրենց հերթը, ու նրանց հաջողվեց իրենց լսել տալ:

-Երբեք չեմ գնում պատարագի, սուտ եմ խոսում,-փութկոտորեն ասաց երիտասարդ աղջիկը՝ վախենալով, թե չի հասցնի՝ նվաստացման մոլեգնության մեջ,-և հետո բոլոր մեղքերը, որ ուզում եք…բոլորը խոստովանում եմ…Ու վախից չէ, որ այստեղ եմ, հավատացե՛ք, լոկ Աստծուն մոտ լինելու ցանկությունից, երդվո՛ւմ եմ Ձեզ…,- ու համոզված էր, որ անկեղծ էր խոսում:

-Ես քեզ թողություն եմ տալիս…,-մրթմրթաց քահանան ու անցավ Պյետրոյին:

Բայց մի անասելի տագնապ էր ալիքվում մարդկանց շարքերում: Ինչ-որ մեկը հարցրեց.

-Ինչքա՞ն ժամանակ է մնում Ահեղ Դատաստանին: Մեկ ուրիշը, որ լավ տեղեկացված էր, նայեց ժամացույցին.

-Տասը րոպե,-պատասխանեց հեղինակավոր տոնով:

Դա լսեց քահանան ու փորձեց հեռանալ: Բայց անկշտում մարդիկ նրան պահեցին: Նա ասես տենդի մեջ լիներ. պարզ էր, որ խոստովանությունների աղմուկը նրան էր հասնում որպես անիմաստ, խառնիճաղանջ գվվոց: Նա խաչակնքում էր՝ մեքենայորեն կրկնելով.

-Ես քեզ թողություն եմ տալիս:

-Ուբ րոպե,-զգուշացրեց մի ձայն ամբոխի միջից:

Քահանան բառացիորեն դողում էր, ոտքերը խփում էր մարմարին չարաճճիություն անող երեխայի պես:

-Իսկ ե՞ս, ե՞ս,- սկսեց աղաչել հուսահատորեն: Այդ անիծյալները (սատանա՛ն տաներ դրանց) իրեն զրկում էին հոգու փրկությունից: Բայց ինչպե՞ս ազատվել, ինչպե՞ս հոգ տանել ինքդ քո մասին:

Մի քիչ էլ, ու պիտի լաց լիներ:

-Իսկ ե՞ս, ե՞ս,- հարցնում էր հազարավոր այդ մարդկանց՝ դրախտի այդ թեկնածուներին, որոնք դիմում էին իրեն:

Բայց ոչ ոք չէր լսում նրան:

Իտալերենից թարգմանեց
ԳԱՌՆԻԿ ՄԵԼՔՈՆՅԱՆԸ

ՍԵԴԱ ՄԻՆԱՍՅԱՆ

ՄԻ ԿԱԹՆԱԳՈՒՅՆ ՍՓՌՈՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Երեկոները, երբ անցնում էինք մեր փողոցի իրար շատ կիպ կառուցված շենքերի կողքով, պատուհանները լուսավորվում էին մեկը մի քիչ պայծառ, մեկը մի քիչ խավար լույսերով: Արագ անցնելիս մի պատուհանից մյուսն էին փախչում պատուհանական պատմությունները:

Այդպիսի պատուհաններից մեկում ապրում էր մեր թաղի Ալլա տոտան: Մենակ էր ապրում, զավակներ չուներ, երևի հույս էլ չուներ արդեն, թե երբևէ կունենա:

Այնքան կոկիկ էր նրա տան ամեն անկյուն: Սեղանի սփռոցը միշտ այնքա՜ն կաթնագույն էր: Զարմանալ կարելի էր, ինչպես մոտ քսան տարի այդ սփռոցի վրա չէր հայտնվում անգամ փոշու հյուլե: Գիտեք՝ ո՛ր կանանցից էր մեր թաղի Ալլա տոտան, ամենահասարակ օրերին, աշխատանքից վերադառնալիս թեյում էր անգլիական թեյի սերվիսի բաժակներով ու անգամ տանը նրբաճաշակ էր հագնվում՝ կիսաբաց գույների խաղիկներով: Տան անկյուններում հիասքանչ խնամված բուսատեսակներ էին: Փարթամությունից երևում էր, որ սիրվել են աճման ընթացքում: Զուգագուլպաները միշտ մի տեսակ արտասովոր փայլ ունեին՝ ինքնունականները հիշեցնող: Միշտ կրում էր իր ոսկյա բարակ թևնոցն ու անգամ տանը չէր բաժանվում դրանից: Հարուստ չէր, բնավ, կյանքի քառասունվեց տարիների ընթացքում ինչ-որ իրադարձություն նրան ստիպել էր համոզվել, որ կյանքը մեկն է, և պետք է հնարավորինս սիրուն ապրել:

Հիասքանչ հայոց լեզու գիտեր Ալլա տոտան ու սիրում էր, երբ մեր շարադրությունները տանում էինք, որ կարդար, ստուգեր: Միշտ ասում էր՝ իրեն զարմացնում է վեցերորդ դասարանցու մտքի թռիչքը, ինչեր կարող է մտածել նորածիլ միտքը, որ մեծահասակի մտքի ծայրով անգամ կարող է չանցնել ստեղծագործությանը այդ ընթացքը տալ: Ասում էր՝ «երեխաներն ամենալավ հեքիաթասացներն են…»: Նեղվում էր, որ «Ալլա տոտա» էինք ասում, թե «Ես ջահել եմ, հետո ինչ, որ տարիքս 4-6 չէ, այլ չորս ու վեց իրար կպած»: Ասում ու ծիծաղում էր իր անասելի զուսպ ծիծաղով, ասես մեկը պիտի նախատեր իրեն իր ուրախության համար:

Մի անգամ իրենց դիմացի շենքի Շուշանիկը զանգեց մեր տան երկա՜ր լարով հեռախոսին.

-Հանձնարարություն են տվել, գլուխ չեմ հանում, գալի՞ս ես գնանք Ալլա տոտայենց, ոնց էլ չլինի կիմանա ինչ անել:

Գնացինք: Շուշանիկը տեղավորվեց Ալլա տոտայենց տան հյուրասենյակի զարդանախշերով աթոռի ծայրին: Դրանից մի տեսակ էրմիտաժի հոտն էր գալիս, հին էր, բայց շատ լավ պահպանված: Շատ զգուշորեն տեղավորվեց Շուշանիկը, ասես վախենում էր փչացնել այն:

-Հանգի՛ստ նստիր, Շուշա՛ն ջան,- երեխայի անհարմարությունը նկատելով՝ ասաց Ալլա տոտան,-ասա տեսնեմ՝ ինչ է պատահել:

-Էսօր դպրոցում Ավետիք Իսահակյանի «Հավերժական սիրտ»-ն ենք անցել, Ալլա տոտա,-Շուշանիկն ուզում էր շարունակել, բայց զրուցակիցն ընդհատեց նրան.

-«Հավերժական սիրտը» չէ, Շուշանիկ ջան, «Հավերժական սերը»:

-Հա, հենց էդ էի ուզում ասել: Հիմա հանձնարարել են մի պատմություն հորինել հավերժական սիրո մասին: Ես կյանքիս մեջ իսկի մի անգամ սիրահարված էլ չկամ, ինչ մի վեցերորդ դասարանցուն տալու հանձնարարություն է,- Շուշանիկի աչքերը չարաճճի փայլով փայլեցին,- հիմա ես ի՞նչ գրեմ:

Ալլա տոտան մի քանի րոպե լռում էր՝ նայելով իր կաթնագույն սփռոցի ծոպերին:

-Արի ես քեզ միտքը տամ, դու շարադրիր, հետո ես ուղղագրությունն ու կետադրությունը կստուգեմ,-հոգոց հանեց Ալլա տոտան:

Մենք հարմար տեղավորվեցինք՝ սպասելով մի նոր հեքիաթային պատմության, որ Ալլա տոտան սովորաբար հորինում էր: Մեր սպասումները չարդարացան Ալլա տոտայի առաջին իսկ տողերից.

-Դա պատահել է վաղո՜ւց, Լոռվա հի՜ն գյուղերից մեկում, դեպի ուր անգամ ճանապարհ չէր գցված: Պատահել է Ալլա տատիս հետ: Մի առիթով պատմեց ինձ, չգիտեմ՝ ինչու պատմեց, սիրտը լցված էր երևի: Տատս տասներեք տարեկան էր, երկա՜ր մազեր ուներ, ամեն խոսքի գլուխ հիշատակում էր: Ասում էր՝ ինքն ու քույրը գյուղի ամենասիրուն աղջիկներն են եղել: Չնայած փոքր տարիքին, շատ երևացող աղջիկ է եղել տատս, պատմում էր ու հրճվում դրանով: Տասնվեցում

տատիս ամուսնացրին ծնողները, բայց պատմությունը դրա մասին չէ: Հիշում եմ, մի էսպիսի իրիկուն էր՝ նստած էինք մեր պտղատու այգու մաքուր օդին, երբ տատիս հարց ու փորձ արեցի էս պատմությունից, ասաց. «Մի անգամ դպրոցից դուրս էկանք ես ու մեծ քույրս, որ գնանք տուն, դպրոցն էլ դպրոց լիներ, մի բլբլած տեղ: Գյուղն էլ փոքր էր, բոլորս իրար ճանաչում էինք: Չգիտեմ՝ ոնց էր ստացվել, որ առաջ չէի նկատել էդ տղին, որ հիմա կանգնած էր դպրոցից մի քիչ հեռու: Պոչավոր աչքեր ուներ, սաթի պես սև: Իմ տասներեքն էլ նոր էր լրացել, իսկի բան չէի հասկանում կյանքից: Ինքն էլ ինձ տեսավ էդ պահին, բայց շուտ հայացքը դարձրեց: Քրոջս թևից սեղմեցի, թե ով է էդի, ասաց՝ Համիկի տղեն է, Համիկին էլ նորմալ տեղը չբերեցի, բայց տղուն այլևս չմոռացա»:

Ալլա տոտան շունչ առավ.

-Տատս շատ էր ուզում ցույց տալ, որ յոթանասունին մոտ, իրեն էդ պատմությունը այնքան էլ չի հուզում, բայց լավ չէր ստացվում. ամեն անգամ խոսելիս խոր կսկիծ կար ձայնի մեջ: Ասում էր, չնայած որ էդ տղան գալիս էր ամեն օր դպրոցի մոտ ու տատիս հետևից հասնում էր մինչև իրենց տուն, մի քանի ամիս անց նո՞ր տատս իմացավ, որ անունը Հայկ է: Ամեն անգամ, որ հարցնում էի, թե չէի՞ն խոսում, տատս ասում էր. «Ա՜յ բալա, էն ժամանակ մենք աբուռ ունեինք, ամոթ կանեինք գյուղում կանգնեինք մեկի հետ խոսեինք, շատ էլ թե դուրերս գալիս էր, հեռվից իրար նայում էինք, բառ չփոխանակած կարոտ էինք առնում: Մտքումս արդեն ամուսնացել, մի տասը երեխա էինք ունեցել»,-ասում էր տատս ու ծիծաղում մի շա՜տ ցավոտ ծիծաղով: Հետո ավելացնում էր. «Այ էդ սե՜ր էր, բալա՛ ջան, իրար հետ հայացքով էինք խոսում, իսկի չգիտեինք՝ որիս ձենն ինչ ձև էր հնչում, ոչ թե հիմիկվանների նման հանդիպում են, խոսում են, վերջում էլ ասում են՝ իրար չհասկացանք»:

Շուշանիկը չդիմացավ.

-Բա վերջը ի՞նչ եղավ, Ալլա՛ տոտա:

Ես էլ նույն անհամբերությամբ տատիս էդ հարցը տվի, ասաց. «Վերջն էն եղավ. բալա՛ ջան, որ մի օր էկավ դպրոց, ոտքից կաղում էր, մի կերպ հասավ մեր հետևից»: Հետո գնալով սկսեց ավելի ու ավելի շատ կաղալ, արդեն ճամփի կեսից կորչում էր, էնքան մինչև էլ չերևաց ո՛չ դպրոցի, ո՛չ տան մոտերքը: Չդիմացա, ասի՝ էս ու էն կողմից իմանամ՝ ինչ է էղել էդ տղին, վերջը մեծ քրոջս միջոցով մեր հարևանի աղջկանից իմացա, որ ոտքը ժանգոտ մեխ է մտած էղել դաշտը գործ անելիս, հանել են, լավ չեն մշակել վերքը, դե՜ էն ժամանակ ո՞վ էր դրանից բան հասկանում, էն էլ մեր խուլ գյուղում: Հիմա էլ արդեն ոտքը փտում էր, նոր էին հասկացել, որ բորբոքվում էր, ասել էին՝ կտրենք»: Հարցրի՝ ծանր տարա՞վ, ասաց. «Ի՜, ա՛յ բալա, էրեխա էի, ինչ էի հասկանում՝ ինչ կլիներ: Ես հո չէի պատկերացնի, որ բորբոքումը արյան վարակում կդառնա, ինքն էլ կմեռնի, կգնա»:

Շուշանիկը դողաց.

-Մահացե՞լ է,-հազիվ արտաբերեց:

-Փաստորեն, Շուշանի՛կ ջան,-հոգոց հանեց Ալլա տոտան:

-Բա տատդ ո՞նց ապրեց հետո, Ալլա՛ տոտա,-հարցրի ես երկար լռությունից հետո:

-Իր ասելով՝ տասնվեցում պապիս հետ ամուսնացրին: Ասում էր. «Էկան ինձ ուզելու, իսկի չգիտեի՝ փեսան որ մեկն էր, մեծ առումով մեկ էր ինձ համար: Ծնողներս տվին, ես էլ պապիդ առա, էկա քաղաք, դժգոհ չեմ ապրածս կյանքից, բայց էն տասներեք տարեկան Ալլան միշտ իմ մեջ մնաց, որ դեռ հավատում էր, որ Հայկը կապրի»:

-Ես գիտեմ՝ ինչ է պետք գրել,-ասաց Շուշանիկն ու վերցրեց թուղթն ու գրիչը:

Ալլա տոտայի աչքերը թացացան: Այսօր, երբ ես հասուն եմ, նրա թաց աչքերը ստիպում են ինձ կասկածել, մի՞թե Ալլա տատը Ալլա տոտայի սեփական պատմությունն էր, որ չնայած իր հերոսի, ինքը այդպես էլ չէր հաղթահարել «իր Հայկի» մահը, բայց պահպանել էր ավելի լավ կյանքի, ամուսնու և զավակներ ունենալու պարզագույն ցանկությունը:

ՀՐԱՆՈՒԾ

ՈԳՈՒ ԼԵՁՎՈՎ

Ծալքերից իմ նվիրական
աստղաթերթի
Ապրումների թրթիռներով դու
թարգմանիր
Խռովահույզ կռունկների
անվայրէջք չուն,
Այգին թափուր, մեր երբեմնի
նստարանը՝
Չոր ու լքված,
Տերևների խաղը գունեղ՝
լապտերի տակ,
Ծաղկաթափը անցնող օրվա,
Մեզ հրամցված եռանկյունին,
Անպտղակալ խենթությունը
գիշերների,
Հին ու նորի ստվերն ստվար,
Ծանրությունը զղջումների:
Իմ, քո մասին ու մեր սիրո
Ես լռում եմ,
Իսկ բառերի խտացումը
տխրեցնող է
Ակը կորած մատանու պես,
Զարդատուփիս մեջ մոռացված
Խեցիների արցունքի չափ:
Չեմ հասկացվում…
Դու թարգմանի՛ր ապրումների
հնչյուններով
Միա՛կ բառը,
Այս անհեթեթ անծիր հեռուն
Եվ ընդմիշտը, ներքնածիգը
բևեռների,
Նռան հյութի երգն հեթանոս
նկուղներում,
Անկողնու մեջ մեռնող ցուրտը
Եվ կարոտից փշաքաղվող
փողոցների
Ամայությունը թարգմանի՛ր
Իմ հայելուց
Քո հայելում:

ԽԵՆԹՈՒԹՅՈՒՆ

Թվում է՝ մենակ եմ, թվում է՝
անկյանք եմ,
Եվ երանությունը մոռացել է
ինձ,
Շողում է սաղարթս, ամառ է,
շոգ ամառ,
Քամին կրկին եկել, գրկել է
ամուր,
Շոյում, փայփայում է ինձ ներս
ու դրսից:
Ես չեմ հասցնում նրան ասել՝ չէ՛,
Նա իմ համաձայնությունը չի էլ
հարցնում,
Օ՜, վարսե՜րս, թևե՜րս, իրա՜նս,
Նազում եմ, ալիքվո՜ւմ,
ցնորվո՜ւմ...
Համառ ու խելահեղ է այդ քամին որքան,
Ես սիրո ճոճք եմ նրա գրկում,
Օ՜, սի՜րտս, հոգի՜ս, ճյուղե՜րս,
շո՜ւնչս,
Մի՞թե ես էլ եմ քամի դառնում:

ՀՈՂԱՆՑՈՒՄ

Այդ ինչո՞ւ, ամա՛ռ, ինչո՞ւ
դավեցիր
Եվ ընդհատվեցիր
իմ երկինքներում
Անզուսպ որոտով,
կայծակնհարությամբ
Զայրույթդ դեմքիս այնպես
հարվածեց՝
Աչքերս մի կերպ ափով պահեցի,
Որ չկուրանամ շանթից ահավոր:
Հիմա կարկտածեծ ծաղկաթերթերիս
Ի՞նչ երազ պատմեմ...
Իմ անուրջները մոխրացան
իզուր,
Որտե՞ղ ես, Արև՛,
Եվ ինչո՞ւ, ինչո՞ւ
Հոգվույս միջով է հողանցումն
արվում:

ԱՆԴՈՐՐ

Վաղ առավոտն ամառային,
Այնքա՜ն չքնաղ և կուսական,
Իմ այս փոքրիկ պատուհանից
գիրկս լցվեց,
Կախարդվածի հմայությամբ
Զմայլանքս երկինք հասավ,
Ու անսահման երանության
ելևէջում
Աստվածատուր մի մեղեդի հոգիս պատեց:
Օ՜, չուզեցի շուրջս նայել.
Չկամեցա կյանքը տեսնել
սովորական,
Այլ վայելե՜լ, այլ վայելե՜լ պահն
հմայիչ
Մաքրամաքուր առավոտի
Եվ խենթանա՜լ,
Ա՜խ, խենթանա՜լ...

ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Հավատարիմ շներս իմ բազում
ցավերն են,
Որ ոռնում են, վնգստում,
կաղկանձում անվերջ:
Ահա նրանց մետաղե ծանր
շղթաները
Ճռճռում են տիրույթիս մեջ խուլ
զրնգոցով:
Ես օղակն եմ նրանց և
հավաքատեղին,
Պարզվում է, որ սերն է ծնել
նրանց:
Սիրո և նվիրվածության տանջող պտուղներ…
Պարտավորված եմ խլացնել
ձեր ձայնն ահասարսուռ
Եվ ջլատող ձեր բնույթին
դիմանալ,
Թե արձակեմ ձեզ՝ կոչնչանաք,
ես էլ չեմ լինի…

ԱՆՈՐՍԱԼԻ

Այսօր նորից փշրվեցի հանիրավի և անխնա,
Որ էլ երբեք չամբողջանամ՝
Քամին ցրեց բյուրեղներս
աշխարհով մեկ:
Տարածվել եմ ամենուրեք,
Բայց ոչ մի տեղ չեմ երևում,
Երբ մահը գա հրճվալից,
Ինձ չի գտնի,
ժպիտներս կտարածվեն
Հաղթանակած երկինքներում,
Չնվաճված բարձունքներից
ասել կուզեմ՝
Դու էլ, դուք էլ ինձ չփնտրեք:

ԲՆԱՆԿԱՐ

Ամպը երկնքից ցած գահավիժեց,
Սարի լանջերին դանդաղ
փարվելով՝
Լցվեց խոր ձորը, ուր գետն է
հոսում:
Հեշտ չէ բարձունքից ներքև
սլանալ՝
Առանց մի կաթիլ արցունք
թափելու,
Ցավից խեղդվելով...
Եվ անակնկալ ճակատագրի,
Սիրո հորձանուտ.
Ջուրը՝ ամպ դարձած և գետ՝ լի
կյանքով,
Ինչպիսի՜ կարոտ, ինչպիսի՜
գգվանք,
Միաձուլվեցին խենթ
տվայտանքով...
Հոգ չէ, թե ճամփան ինչպես
կընթանա,
Հոգ չէ, երբ սերն է տիրակալ
դառնում,
Երբ որ համբույր կա գետի
շուրթերին,
Եվ նրա գրկում ամպն է լուռ հևում,
Իսկ քարափները ժպտում են
ծածուկ,
Թե իբր, իբր ոչինչ չեն տեսել...

ԱՆՈՐՈՇ

1.
Տարիներ հետո, սպասումներից, իմ Անորոշը
Երանգավորվեց ավելի սառը,
Մռայլ գույներով.
Քեզ նորից գտա,
Ես հանդիպեցի քո չկայի հետ...
Հայելին ասաց, որ մեկ վայրկյանում
Հանկարծ մեծացա մոտ հարյուր դարով:
Իմ Անորոշը երանգավորվեց
Մեռյալ գույներով:

2.
Տարածության ու ժամանակների քողը պատռվեց,
Անցյալի հորձանքն ահռելի
թափով
Բարձրացավ վերև՝ մինչև
աստղերը,
Նրանց փայլն առավ ու գիրկս
լցվեց:
...Դու երկինքներից եկար ինձ
այցի՝
Այնքա՜ն հարազատ,
Այնքա՜ն մտերիմ,
Այնպես նյութական,
Որ երջանկացա, երբ քեզ զգացի:
Մենք իրար գտանք:
Ո՛չ տարածություն և ո՛չ ժամանակ
Չի խանգարում մեզ:
Ու էլի՛, էլի՛ մեծ կախարդանքով
հմայվածության,
Ճակատագրի քմահաճույքով
ապրեցինք ներկան՝
Դյութիչ երանգում ելևէջների
Մեծ երանության:
...Եվ ո՛չ մի պատրանք...

ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔ

Մի ժամանակ շառաչում էիր
մտրակելու պես,
Հիմա փչում ես փաղաքշանքի
նման:
Թուլությունս լավ գիտես,
Լսողությունս մեղմ երգի է
կարոտ:
Երբ դու հնչում ես վայելքի
նման,
Իմ խորքերում պահված
դուդուկն ու ջութակը
Միասին, անընդմեջ
արձագանքում են քեզ:
Չլռես հանկարծ,
Երգն այս թող հնչի
շարունակաբար:
Իմ Արալեզն եղիր:
Կախարդական բառեր շշնջա,
Եվ բանալին անցքում
կպտտվի,
Ահագնացած
ստվերը կանհետանա:
Ես հավատում եմ հրաշքների:
...Անսովոր կվարտետ ենք, չէ՞,
Ես, դու, աներևույթ դուդուկն ու
ջութակը:
Կարծում ես՝ չե՞ն ներդաշնակի
մեր հնչյունները,
Առատ փաթիլներն
անմասնակից կլինեն
Հերթական
երազի իրականացմանը:
Կարծում ես մթագնել եմ,
ծանրացել:
Ո՛չ:
Հոգուս մեղեդին լռեցնելու
սովորությունը
Մի տեսակ խաթարվել է.
Այսօր այն հնչել է ուզում
Մենության թափանցիկ թվացող
թրթիռներում:
Տե՛ս, օդը տաքանում է կամաց-կամաց,
Ադամանդվում է վրայիս
եղյամը:
Աչքերդ փակիր,
Շողարձակումս կուրացուցիչ է
լինելու,
Աստիճանաբար վարժվիր
ճառագումներիս,
Եղիր պահերիս որսորդը:
Մոխիրն ընդունակ է մի անգամ
ևս
Բոցավառվելու:

ՔԱՅԼ

...Քեզ այդպես, հենց այդպես էր
պետք,
Որ հավաքեի ինձանից թափվող
Փեշերը սիրուս:
Վարագուրեի տանջող ցավը իմ՝
Դաժան ժպիտով,
Փականք դնեի ինքս իմ սրտին
Եվ ասեի քեզ...
Քեզ այդպես, հենց այդպես էր
պետք,
Որ հուրն հոգումս անթեղված,
դաղող,
Ի ցույց դնեի սառած մոխրի
պես,
Անհաղորդ
շուրթերս արտաբերեին՝
Անտարբեր, անգութ.
-Էլ չեմ սիրում քեզ...
Լավ գիտակցելով,
թե որքան ցավ եմ
Ինձ պատճառելու՝
Դատափետելով
ինքս ինձ այսուհետ.
Քեզ այդպես էր պետք:

Գուցե ինձ՝ ևս...

ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ ԱՊՐԱԾ ՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԾ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ՆԿԱՐԻՉՆԵՐԸ. ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ, ՊԵՏՐՈՍ ԿՈՆՏՈՒՐԱՋՅԱՆ, ՆՎԵՐ ՍԱՖՅԱՆ

«Սոցիալիստական դրախտավայրի» մտապատկերով խաբված բազմահազար հայրենադարձներ, ռոմանտիկ մղումով համակված, եկան հայրենիք: Երկրորդ համաշխարհայինում հաղթանակած երկիրը հեռվից թվում էր հույսի ու լույսի փարոս: Սակայն հայրենիքը դեռ պատրաստ չէր ընդունելու իր բազմաթիվ տարագիր զավակներին: Բարգավաճ ու զարգացած երկրներից գաղթած հայորդիները հայտնվեցին խոր հիասթափության մեջ. քաղցը, հետպատերազմյան տարիների անհարմարավետ կյանքը մի կողմից, քաղաքական հալածանքները մյուս կողմից, շուտով փշրեցին հայրենիքում կայանալու այն ողորկ հույսերը, որ կային հայրենադարձների մեջ: Նրանց մի մասն էլ շուտով աքսորվեց Սիբիրի խորքերը՝ մատնվելով անխուսափելի կորստյան: Քչերին հաջողվեց դիմակայել ու արմատներ ձգել հայրենի հողում:

ՊԵՏՐՈՍ ԿՈՆՏՈՒՐԱՋՅԱՆԸ (1905-1956)՝ եղեռնի տարիներին ծնողներին կորցրած ու մանկությունը որբանոցում անցկացրած նկարիչը Ֆրանսիայից Խորհրդային Հայաստան տեղափոխվելուց

հետո՝ 1947-1951թթ., ապրել և ստեղծագործել է Լենինականում: «1947թ. սոցիալիզմի սիրուն համար ես հրաժարվեցի իմ թանկագին հարազատներիցս ու մեն-մենակ ներգաղթեցի Հայաստան»,- գրել է նա: Հետպատերազմյան Լենինականը, ինչ խոսք, բարեկեցության կենտրոն չէր: Բայց նկարիչն ապրում էր, հարմարվում զարմանալի քաղաքի կյանքին: Լենինականը Փարիզ չէր: Լենինականը Փարիզ չէ՛ր, սակայն գերիչ էր իր առանձնահատկությամբ. երկհարկանի սրբատաշ տուֆով կառուցված քաղաքում վեր էին խոյանում նշանավոր եկեղեցիները: Քաղաքը շնչում էր արհեստներով, թատրոնով ու արվեստով: Լենինականը նաև մշակութային օազիս էր, տաղանդների հանգրվան:

Համեստ, ազնիվ Կոնտուրաջյանը աշխատում է Մռավյանի անվան թատրոնում և դասավանդում միջնակարգ դպրոցում՝ հայրական հոգատարությամբ վերաբերվելով իր սաներին: Ֆրանսիական արվեստին քաջածանոթ՝ նա իր սաներին բացատրում էր տարբեր նկարչական տեխնիկաներ, տանում էր թանգարանների, ծանոթացնում արվեստի պատմությանը:

Խոսելով Կոնտուրաջյանի արվեստի մասին՝ Հ. Իգիթյանը օգտագործում է «մաքուր», «վճիտ» բառերը: Դրանք չեն ձգտում «հատուկ կարևորության թեմաների», ոչ էլ նորարարության հավակնություն ունեն: Գործերի մի մասը արված է թղթի, ստվարաթղթի, տախտակի երկու երեսների վրա: Դրանք անշտապ, հանգիստ, մեծ ազնվություն ու կյանքի հանդեպ անկեղծ վերաբերմունք պարունակող գործեր են: Դրանց մեջ խտանում են յուրօրինակ մենություն ու լռություն: Կոնտուրաջյանի կտավները՝ Լենինականում նկարչի ստեղծած առաջին աշխատանքները, իրենց կապտաարծաթավուն երանգավորումով հիշեցնում են ֆրանսիական շրջանի գործերը: Օրինակ՝ ձկներով նատյուրմորտում պատկերված է ջրաման, ափսեի մեջ դրված ձկներ, ծլած սոխ, բաժակով ջուր ու հաց: Ռիթմիկ գծանկարը դիտողի հայացքը սահեցնում է մի առարկայից մյուսին՝ հիշեցնելով հետպատերազմյան կյանքի աղքատիկ օրեր: Լենինականում ապրելիս նկարիչը վրձնել է նաև ճարտարապետական հուշարձաններ՝ «Մարմաշենի վանքը», «Լմբատավանքը» որոնք, սակայն, չեն պահպանվել:

Կոնտուրաջյանի աշխատանքները խոսում են գեղանկարչական բարձր վարպետության, ճաշակի ու ինքնատիպության մասին: Ցավոք, նկարչի և նրա ընտանիքի դրամատիկ վախճանը կասեցրին նրա արվեստի հետագա զարգացումն ու գրեթե աննկատ թողեցին տաղանդավոր նկարչի գործունեությունը:

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆԸ (1923-2013) ծնունդով Ալեքսանդրիայից էր: Միգուցե իր ծննդավայրի անվան նմանությունն էր Ալեքսանդրապոլին, որը մոգական ուժով ձգեց նկարչին՝ մի քանի տարի ապաստան ու ստեղծագործական ոգեշնչում տալով նրան: Հատկանշական է, որ մինչև Հայաստան գալը Հակոբյանը ոչ մի բնանկար չէր արել: Ինչպես նկատում է Իգիթյանը. «Այդ շրջանում նրա արվեստն առավելապես ներփակ, կամերային բնույթ է ունեցել: Նրա ողջ կյանքը, խոհերը, որոնումները սահմանափակվել են սենյակի չորս պատերով, ուր կուտակվել են պոտենցիալ մեծ հնարավորություններ պարունակող նրա գործերը, հնարավորություններ, որ դրսևորվեցին հայրենիքում»: Հակոբյանի առաջին ծանոթությունը Լենինականին դարձավ որոշիչ ու ճակատագրական. «Երբ հասանք Լենինական… չորս աչք դարձած՝ նայում էի, թե Լենինական քաղաքի մեջ որևէ նկարելու բան կա՞ր ինձ համար: …Տեսա տուֆակերտ, հին, սև Լենինականը: Քարքարոտ այդ տունները, որ տեսա, ասի՝ ուրեմն ես այստեղ նկարելու բան ունեմ: Առաջին օրն իսկ Լենինականում գնացի նստեցի փողոցի վրա և սկսեցի նկարել»:

Այստեղ նա դարձավ հայկական բնաշխարհի նորօրյա երգիչը՝ բացահայտելով նրա գողտրիկ, բայց մոնումենտալ գեղեցկությունը: Լենինականում ապրած տարիներին նկարիչը ստեղծեց «բացառիկ ամփոփ ու ամբողջական» նկարների շարք:

Քաղաքը բյուրեղացրեց նրա մտածողությունը, հասցրեց ձևի ծայրահեղ պարզեցմանը: Իր լավագույն բնանկարներում՝ «Փողոց Լենինականում», «Լենինական. Կիրովի փողոց», «Բակ», «Ուշ աշուն», «Վաղ գարուն», նկարիչը հասնում է բացառիկ ընդհանրացման: Նա ասես բացահայտում է քաղաքի ու նրա գողտրիկ փողոցների մետաֆիզիկական լռությունն ու մոնումենտալ գեղեցկությունը: «Դարպասներ» բնանկարում կտավը ձեռք է բերում տարածություն և զարգացնում է հեռանկարի պատրանքը: Խաղաղ փողոց, դեպի հեռուն գնացող և անսպասելիորեն հեռագրասյունի

«դեմ առնող» տնակներ, որոնք զարմանալի ճշգրտությամբ պատկերում են քաղաքի բնույթը: «Ի վերջո, կարևորը ոչ միայն քաղաքի գրավիչ կողմերն են, այլև այն, որ այստեղ գործ ունենք սովորական անշուք տնակներից, չոր ծառերից ու հեռագրասյուներից գեղեցկություն հյուսող նկարչի հետ»: Կտավների գունաշարը հիմնված է դարչնականաչավուն երանգների ու գծային ռեֆլեքսների համադրության վրա: Իգիթյանը այս կոմպոզիցիաները համարում է «բնօրինակի աբստրահարում» ոչ թե խախտելով ձևը, այլ ազատելով կողմնակի առարկաներից, բեռնաթափելով բոլոր կարգի ավելորդություններից»: Նրա բնանկարներում չկան մարդիկ. տիրում է մետաֆիզիկական լռություն: Եվրոպական արվեստին քաջածանոթ նկարիչը ասես երկխոսում է Կիրիկոյի հետ, դատարկության միջոցով ցույց տալիս քաղաքի խորհրդավոր լռությունն ու միստիկ էությունը: Սակայն, ի տարբերություն Կիրիկոյի վառ գույների, Հակոբյանն օգտագործում է նրբերանգներ, տոնային անցումներ, մեղմ գունաշար:

ՆՎԵՐ ՍԱՖՅԱՆԸ (1939) ծնվել է Իրաքի Գերկուկ քաղաքում՝ Հակոբյանների ընտանիքում: Հայրն ու եղբայրները ներգրավված էին Գյուլբենկյանների նավթարդյունաբերական ընկերությունում»: Ծնողները, լինելով մեծ հայրենասերներ, Մերձավոր Արևելքում աղջկան տվել են հայեցի դաստիարակություն: Նվերը սովորել է տեղի Խրիմյան Հայրիկի անվան 10-ամյա հայկական դպրոցում, հետո՝ Բաղդադի ամերիկյան 12-ամյա օրիորդաց դպրոցում: 1960թ. -ից հաճախել է Բաղդադի արվեստների բարձրագույն ակադեմիա, որտեղ դասավանդել են Փարիզից ժամանած վարպետներ: Արևելքում նկարչուհի լինելը բացառիկ երևույթ էր: Նվեր Հակոբյանը, որ կուրսի միակ աղջիկն էր, աչքի էր ընկնում բացառիկ ունակություններով ու տաղանդով: Բեյրութում նա գեղանկար էր դասավանդում, երբ տեղի է ունենում հանդիպում հայ նկարիչների պատվիրակության անդամների՝ Տ. Չախմախչյանի և Հ. Ռուխկյանի հետ: Ռուխկյանը վերադառնալով՝ նամակ է գրում Նվերին՝ հրավիրելով Հայաստան գեղարվեստական կրթություն ստանալու: Ու թեև Նվերը միաժամանակ ընդունվել էր Մերձավոր Արևելքի 2 բուհերն էլ՝ Բեյրութի համալսարանն ու Բաղդադի բարձրագույն ակադեմիան, որոշում է հայրենադարձվել և ուսումը շարունակել մայր հայրենիքում: Հավանաբար, աղջիկը փորձեց իրագործել հոր երազանքը, քանի որ հայրը ողջ կյանքում երազել էր վերադառնալ հայրենիք, ինչը նրան չէր հաջողվել: 1964թ. Նվերը Հայաստանում է. նա դառնում է գեղարվեստաթատերական ինստիտուտի առաջին հայրենադարձ ուսանողուհին: Բուհի պրոռեկտորը, իմանալով, որ նա ընդունվել է նաև երկու այլ բուհեր, զարմացած հարցնում է. «Աղջի՛կ ջան, ինչո՞ւ ես եկել Հայաստան»: Նվերը պատասխանում է. «Եկել եմ իրապաշտայի՛ն նկարչություն սովորելու»: Եվ նա նախընտրեց ինստիտուտի նորաբաց՝ ձևավորման բաժինը:

Կյանքը հետզհետե ընկնում էր հունի մեջ. շփվող ու բարյացակամ աղջիկը բոլորի հետ ընդհանուր եզրեր է գտնում, երբեք չի տրտնջում, չի դժգոհում խորհրդային ապրելակերպից: Շնորհիվ իր բազմաթիվ ազգականների ու բարեկամական կապերի՝ նա այցելում է Փարիզ, Լոնդոն, Կոպենհագեն, Աթենք, Մյունխեն, Բեռլին… Մի քանի տարում նա լինում է Եվրոպայի լավագույն քաղաքներում, ամենուրեք այցելում թանգարաններ, մշակութային օջախներ: Հատկապես տպավորիչ էր Փարիզ կատարած



ուղևորությունը, որը արվեստասեր աղջկա համար իսկական բացահայտում էր: Միայն 13 անգամ նա այցելում է Լուվր: Հորեղբոր աղջկա՝ Վերժինեի հետ, որը համարվում էր Փարիզի երրորդ վիտրինի ստը, լինում է Քրիստիան Դիորի նորաձևության տանը, որը կախարդական աշխարհ էր հիշեցնում ձևավորողի մասնագիտություն ընտրած և նորաձևությունից հեռու խորհրդային իրականության մեջ ապրող աղջկա համար: Նվերը իրեն նվիրած SHWARC սարքով էյֆելյան աշտարակից նկարահանում էր տեսարաններ փարիզյան կյանքից ու առօրյայից: Փարիզի մասին պատմող այդ փոքրիկ ֆիլմը տեսել ու շատ էր հավանել քանդակագործ Արա Սարգսյանը:

Ճանաչողական այցով Գեղարվեստաթատերական ինստիտուտ էին գալիս լավագույն մտավորականները: Սակայն Նվերին նախ և առաջ հետաքրքրում էր նկարչությունը: Նա պատկանում էր այն բախտավոր սերնդին, ում ճեպանկար է դասավանդել Վռամշապուհ Շաքարյանը, իսկ գծանկար ու գունանկար՝ Մասիս Գրիգորյանն ու Գրիգոր Աղասյանը: Երբ Գեղարվեստաթատերական ինստիտուտի ուսանողների հետ գալիս է հանդիպման Մարտիրոս Սարյանը, նա նկատում է ալ կարմիր բաճկոնով Նվերին ու ցույց տալով նրան՝ ասում է. «Ինքը արև է, ինքը մնալու է այստեղ»: Մեծ Սարյանի խոսքերը դառնում են կանխատեսական. բոլոր սփյուռքահայ ուսանողուհիներից միայն Նվերն է մնում և ընտանիք կազմում Հայաստանում:

1969թ. Սաֆյան Նվերը ավարտում է ինստիտուտը և ամուսնու հետ բնակություն հաստատում Լենինականում, որտեղ զբաղվում է ստեղծագործությամբ և մանկավարժական գործունեությամբ…

Նվեր Սաֆյանը երկար տարիներ դասավանդել է Լենինականի (Գյումրու) երեք բուհերում՝ ամենուրեք, նաև նկարչական դպրոցում՝ կրթելով, նկարչություն սովորեցրելով, ճաշակ ձևավորելով տասնյակ պատանիների ու աղջիկների մեջ: Որտեղ էլ աշխատում էր Սաֆյան Նվերը՝ Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտում, Երևանի Գեղարվեստի ակադեմիայի Գյումրու մասնաճյուղում, նրա շուրջ տիրում էր ստեղծագործական բեղուն մթնոլորտ. իր սաներին նա փորձում էր փոխանցել այն ամենը, ինչ տեսել էր, սովորել Եվրոպայում, Մերձավոր Արևելքում: Նա միշտ ստեղծագործական գործընթացի մեջ էր, ակտիվ մասնակցում էր հանրապետական և միութենական բոլոր ցուցահանդեսներին:

Նկարիչների միության անդամ դառնալը չափազանց դժվար ու պատվաբեր էր այդ տարիներին: Մի քանի փորձից հետո 1982թ. նրան հաջողվում է դառնալ այդ միության անդամ՝ ստանալով երկու տոմսեր (Գեղ. ֆոնդի և Պետական պատվերների), ինչը թույլ է տալիս նաև պետական պատվերներ կատարել:

Սաֆյանը կտավներում գովերգում էր կյանքն իր բոլոր դրսևորումներով. դա դժվարությունների միջով անցած մարդու աշխարհայացք է՝ ապրելու իմաստությամբ ու կյանքի ուժով առլեցուն. «Աշնանային հանգիստ», «Գյուղական կյանք», «Ջաջուռ» կտավներում նա ասես նորովի է բացահայտում ու գովերգում Հայաստանի գողտրիկ անկյունները՝ ստեղծելով կամերային, ընդհանրացված բնապատկերներ:

Դիմանկարների շարքը կատարված է նյութի զգացողությամբ ու բնավորությունների նուրբ մատուցմամբ. «Անահիտի դիմանկարը», «Գնչուհիներ», «Գուշակուհի», «Անահիտ», «Աշոտ»: Մեր կարծիքով, առավել հաջողված են Սաֆյանի նատյուրմորտները, որոնք վկայում են ճաշակի ու նյութի փայլուն տիրապետման մասին. «Հայկական նատյուրմորտ», «Կակտուս», «Երիցուկները», «Մանուշակները պատշգամբի վրա», «Ծաղիկներ»:

Այսպիսով՝ 1950-1960-ականներին Լենինականում ապրել ու ստեղծագործել են սփյուռքահայ գեղանկարիչները՝ Հակոբ Հակոբյանը, Պետրոս Կոնտուրաջյանը, Նվեր Սաֆյանը: Քաղաքի և հայրենադարձ նկարիչների փոխհարաբերությունը տարբեր է եղել. եթե Կոնտուրաջյանը մնացել է չհասկացված, ապա Հակոբյանը նորովի է բացահայտել իր տաղանդը, իսկ Սաֆյանը իր կյանքը նվիրել է մանկավարժական գործունեությանը կերպարվեստի ոլորտում: Նրանք իրենց կենսափորձով, գիտելիքներով, վարպետությամբ մեծ ավանդ բերեցին Լենինականի կերպարվեստի զարգացմանը:

Արաքս ՄԱՐԳԱՐՅԱՆ
Արվեստագիտ. թեկն., դոցենտ

Արմենուհի ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՄԻ ԽՆԴԻՐ

-Սո՛ս, գործերդ կարգավորի՛ր, ավարտի՛ր, որ ինքնաթիռից չուշանաս, տոմսդ օնլայն պատվիրել եմ:

-Հա՛, քո՛ւր ջան, ինչ օր պետք է, էրել եմ, պրոբլեմ չկա, ահագին ժամանակ կա, ամեն ինչ լավ է,- հորաքրոջ աղջկան հանգստացրեց Սոսը և շարունակեց զբաղվել հեռախոսով:

Ժամերը թռչում են:

-Սո՛ս, տե՛ս, չուշանաս, արի տաքսի կանչեմ, թող մի քիչ էլ շուտ լինի, ոչինչ, բայց գոնե ապահով կլինենք, առավոտյան աշխատանքի ես հասնելու չէ՞, ասում ես՝ բացակայել չես կարող…

-Է՜, քո՛ւր ջան, ի՞նչ տաքսի, ես տաքսով գնացողը չեմ, հըմի ավտոմ կպատվիրեմ, կհասնին «Домодедого», էդ ի՞նչ է, քթերիս տակ է, էլի, համ էլ հանգիստ էդի, կոմպով ռեգիստրացիան արդեն անցել եմ:

-Դե՛. լա՛վ, ինչըղ օր գուզես,- անհարմար զգալով շտապեցնելուց, համաձայնեց քույրը:

Շուտով պատվիրած մեքենան եկավ: Սոսը նստեց ղեկին, բռնեց օդանավակայանի ճանապարհը. Մոսկվայից թռչելու է Սանկտ Պետերբուրգ:

Հեռախոսը անհանգիստ զնգզնգում է.

-Սո՛ս, լա՞վ ես, չես ուշանո՞ւմ,- հորաքրոջ աղջիկն է, անհանգստանում է աշխարհի բոլոր բարի քույրերի նման:

-Ամեն ինչ լա՛վ է, քո՛ւր ջան, ան կհասնիմ:

Հասավ: Կտրեց անցավ դահլիճը, ցանկանում է անցնել ուղեփակոցը, որ հասնի ինքնաթիռին, բայց թույլ չեն տալիս.

-Молодой человек, самолет давно улетел…

Պարզվում է՝ թռիչքը ոչ թե 1.50-ին է, ինչպես թվացել է Սոսին, այլ 1.05-ին:

Հնչում է հեռախոսազանգը.

-Հը՞, Սո՛ս, հասա՞ր, նորմա՞լ է ամեն ինչ…

-Հա՛, քո՛ւր ջան, հասա, մենակ թե մե պրոբլեմըմ… սամալյոտն է թռել…

-Հըմի ի՞նչ բդի էնես, Սո՜ս…

-Մի՛ անհանգստացի, տաքսով կհասնիմ «Внукого», ընդեղից կթռնիմ,-միանգամից, գյուտ արածի նման, պատասխանում է ու անջատում զանգը:

Քրոջ անհանգստությունը հասավ ինը բալի. «Չլինի՞ հանկարծ նորմալ տաքսի չպատվիրի, էժան-մեժան, գիշերային տաքսիներով ինչ փորձանքի ասես չես հանդիպի»,- ինքնիրեն, քթի տակ թոնթորում է քույրը:

Զանգեց.

-Սո՛ս, տաքսին 1500 ռուբլի է, նորմալ տաքսի պատվիրի՛ր:

-Քո՛ւր ջան, ես արդեն տաքսու մեջ եմ, 700-ով բարիշել եմ, պրոբլեմ չկա,- մի քիչ պարծենկոտ, ինքն իրենից գոհ, եզրափակեց Սոսը:

-Սո՛ս, չքնես, զգույշ կլինես,- ճարահատյալ նախազգուշացնում է քույրը:

-Լա՛վ, լա՛վ, էրեխա չեմ,- նեղվում է Սոսը:

Երկու ժամ անց՝ զանգ: Հնչում է քրոջ անհամբեր, անհանգիստ, քնատ ու հոգնած ձայնը.

-Սո՛ս, ո՞ւր ես, ի՞նչ արեցիր…

Բոլորովին հանգիստ, իներտ ձայնով հնչում է պատասխանը.

-Ամեն ինչ լավ է, հասա, գուզեմ ելնիմ ինքնաթիռ, բայց մէ պրոբլեմըմ կա՝ պասպորտս չկա՛…

-Սո՜ս…

Պարզվում է՝ համակարգչով տոմս է գնել և անձնագիրը մոռացել է մեքենայի մեջ: Բարեբախտաբար վարորդի հեռախոսահամարը պահպանվել է: Գործին է խառնվում քրոջ ամուսինը: Զանգում է վարորդին, բայց վերջինս համառորեն չի պատասխանում: Վերջապես վոտցապի զանգին պատասխանում է.

-Ալո՛, բարև Ձեզ, Ձեր մեքենայի մեջ անձնագիր է մնացել…

-Какой паспорт, нет нечего…

-Ուշադի՛ր նայեք, անձնագիրը մեքենայի մեջ է, քանի դեռ մոտ եք, հասցրեք տիրոջը, ես շնորհակալ կլինեմ:

-Հա՞, լավ, որ տանեմ՝ ի՞նչ կտաք:

-Երկու անգամ շատ, քան Դուք ստացել եք,- խիստ ու պաշտոնական խոստանում է քրոջ ամուսինը:

Անձնագիրը հասավ Սոսին, միայն թե «մե պրոբլեմըմ»՝ ինքնաթիռը թռել էր առանց Սոսի:

-Սո՛ս, հիմա ի՞նչ ես անելու…

-Քո՛ւր ջան, կերթամ Շերեմետևո…

Ամուսինները սարսափած հայացք փոխանակեցին:

-Սո՛ս, միգուցե տո՞ւն գաս, հանգստանաս,- ինքնաբերաբար առաջարկեց քույրը, բայց անմիջապես էլ փոշմանեց,- չէ՛, մնա այդտեղ, առավոտյան թռիչք կա, հիմա տոմսդ կգնեմ: Բան չի մնացել, կթռնես, աշխատանքի էլ կհասնես, վե՛րջ:

Առավոտյան, իբր գործերով տարված, քույրը ձգձգում է, չի զանգում, փորձում է ինքն իրեն համոզել, որ ամեն ինչ լավ է.

-Լա՛վ, զանգեմ, եթե օդում լինի, գոնե կհասկանամ, որ թռել է:

Սրտի դողով ձեռքն առավ բջջայինը, սեղմեց զանգի կոճակը՝ մեկ, երկու…

-Ալո՛, քո՞ւր…

-Սո՞ս, չե՞ս թռել,- զայրույթի ճիչը խեղդվեց քրոջ կոկորդում:

-Չէ, քո՛ւր ջան, ամեն ինչ լավ էր, մենակ մէ պստիկ պրոբլեմըմ՝ քնել, մնացել էի,- հանգի՜ստ, անխռո՜վ, կարծես ոչինչ էլ չի եղել, հնչում է Սոսի սպանող պատասխանը:

Ակամայից հիշեցի իմ ու ձեր բոլորի իմաստուն մամիկների մտքերից մեկը. «Աշխարհն օր վառի, իրա խորոմ խոտին բա՜ն չի էղնի…»:

ԳԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ԶԱՆԳ

«Այս իրականության մեջ ամեն ինչ հակոտնյա է, ամեն ինչ համեմատության մեջ. չար ու բարի, մութ ու լույս, կյանք ու մահ: Թե՛ կյանք է տրվել, էլ մահն ինչի համար է: Ինչո՞ւ մարդուն չի ընծայվել հավերժության ազատությունը… Հա՜, լա՛վ, մահն է վերջնական լուծումը, բայց գոնե հստակ ժամանակ սահմանված լիներ, և մահն էլ իրավունք չունենար այդ ժամանակի վրա: Իրավո՞ւնք, օրե՞նք, երբևէ գործե՞լ են, եթե այո՛, ապա ավա՜ղ…հայրս դեռ երկար կարող էր մեր կողքին լիներ: Ինչե՜ր կանեինք միասին, ի՜նչ օրեր կանցկացնեինք»,- մտքում փիլիսոփայում և ինքն իր հետ կռիվ էր տալիս հանգուցյալի կրտսեր որդին:

Մահը ներկա էր գրվել և իր ծանր ներկայությամբ բարձրացրել էր կյանքի գինը: Այս կյանքում ամենաներողը, հաշտարարն ու բարին, եկել ու վերջ էր դրել վեճերին, խռովությանը, կասկածներին, չարությանը… Չապրած օրերը ապրածներից հմայիչ էին ներկայանում:

Հոր հանկարծամահը իսկական ցնցում է ողջ ընտանիքի, բայց առանձնակի՝ կրտսեր որդու համար: Նա արդեն երեսունն անց է, բայց դեռ չի ստանձնել սեփական ընտանիք ստեղծելու պատասխանատվությունը: Քույրը, եղբայրը ծնողներին պարգևել են թոռնիկներ ունենալու քաղցրությունը, իսկ ինքը մի տեսակ ձգձգել, ականջի հետև է գցել և չի ուզեցել կտրել ծնող-որդի պորտալարը: Անգամ մտքի ծայրով չի անցրել, որ մի օր ապրելու է առանց նրանց, որ ժիր ու աշխատասեր հայրը նման անսպասելի ձևով կլքի իրենց:

Սիրտն ու հոգին վշտից ընկճված են, իսկ բորբոքված միտքը պատասխաններ է փնտրում, պատասխաններ հանդերձյալ աշխարհի, կյանք կյանքից հետոյի մասին: Հարցեր, որոնք պարուրված են անհայտության խորհրդավորությամբ, և որոնց պատասխանները տրվում են ամեն մեկին յուրովի և իր ժամանակին:

Գրպանի մեջ դզզացող հեռախոսը երիտասարդին կտրեց միստիկ մտքերից, բայց և իր հետ բերեց մի նոր, է՛լ ավելի հավանական միտք: Միտք, որ անպատասխան, խճճված հարցերի կողքին թվաց հանճարեղ: Հասկացավ՝ այդ կերպ ստանալու է բոլոր պատասխանները, գտնելու է բոլոր անհայտների լուծումները: Միտքը դզզոցով կպավ ու պոկ չեկավ:

Ցավոք, անհայտության առաջին ծիլը վախն է: Երիտասարդի դատողություններն էլ հիշեցնում են վախեցած պատանու հետաքրքրություն: Երևակայությունն ուղեղից առաջ է ընկնում՝ թույլ չտալով ճիշտ ու սխալ անել: Սրտի զարկերը ականջներն են լցվում, երբ պատկերացնում է միտքն իրագործած: Դզզոցը չէր սսկվում, պարտադրում էր՝ պիտի փորձել:

Ուշ գիշեր է: Մի քանիսը մոտ հարազատներից ու ընկերներից ցածրաձայն զրուցում են խոհանոցում, սուրճ են խմում՝ անհաղթահարելի քունը մի կերպ հեռու վանելու համար: «Երևի սրանից հարմար պահ չլինի»,- մտածեց երիտասարդն ու աննկատ մոտեցավ հյուրասենյակում իր վերջին գիշերն անցկացնող հորը, դողացող մատներով կոստյումի գրպանում տեղավորեց… բջջային հեռախոսը:

Հաջորդ օրը դժվար օր էր՝ հրաժեշտի օր: Մայիսյան երկինքը ժպտում էր թաց ու մաքուր ժպիտով: Հասմիկների, վարդերի, կակաչների ժամանակ էր: Հոր ձեռքով խնամված, զորացած ծաղիկները բուրում էին տեղատարափ ու կարճ անձրևի մաքրամաքուր թացությամբ:

Հարազատները հերթով մոտենում են հրաժեշտի: Մոտեցավ և մեծ եղբայրը. գրկեց հորը, ձեռքը ինչ-որ կոշտ բան շոշափեց. «Մի՞թե մոռացել ենք գրպանները ստուգել…»,- և երբ բոլորը դուրս էին գալիս, ցանկացավ մենակ մնալ հոր հետ և… գրպանից հանեց հեռախոսը:

…Ամեն հեռացողի հետ տունը լցվում է անհնար, անտանելի, անսահման դատարկությամբ: Դատարկ վիհի մեջ չխեղդվելու համար գալիս են հիշողությունները, պատմությունները, որոնք կարծես ապահովում են բացակայողի ներկայությունը:

Կրտսեր որդին լուռ է՝ մտքով հոր գրպանի հեռախոսի հետ: Տարիքով կանայք, որ մենակ չեն թողնում մորը, անընդհատ խոսում են մահացածի հոգին հանգիստ թողնելուց, չանհանգստացնելուց. մայրը չպիտի լացի, քույրը չպիտի ամեն օր այցելի հորը… իսկ զանգը, հեռախոսազանգը մի՞թե ամենամեծ անհանգստությունը չի լինի հոր համար…

Օրերը թռչում են մեկը մյուսի հետևից, անհանգիստ տատանումների մեջ: Հետո միտքն ինքն իրեն զուլալվեց. «Եթե չէի զանգելու, էլ հեռախոսն ինչի՞ համար…»: Մտքի այս փայլատակումը դարձավ որոշիչ, մատը գնաց զանգի կոճակին, սեղմեց… սպասեց… դար թվացող վայրկյաններ անց պարզ հնչեց կանչող զանգը, շնչասպառ սպասում է… լսվեց զանգի միացման կտտոցը, երիտասարդի մազերը բիզ-բիզ կանգնեցին, մարմինը պաղ քրտնեց, լսվեց հոր մի՜ քիչ երիտասարդացած ձայնը՝ ալո՞… ալո՛…

ԿՅԱՆՔԻ ԵԼԵՎԷՋՆԵՐԻՑ

Բուժքույր էր: Ապագա ամուսինը լավ աչք, ընտիր ճաշակ ուներ: Ձոկեց իր բուժքրոջը՝ սիրուն՝ կուկլի նման, տուն տարավ: Հրամայեց մոռանալ դրսիններին բուժելը: Հիմա պիտի ներսիններին խնամեր. շոր ու կոշիկը մաքրեր, պլպլացներ, հերթով-կարգով երեխաներ ծներ, մեծացներ, մեկ-մեկ էլ՝ ճաշակով, քանկարժեք հագած-կապած ամուսնու թևն ընկներ, գնային ծով ու պրիբալթիկաները ֆոֆռալու: Ամեն ժամ ու վայրկյան՝ վախը սրտում, ախր լա՛վ գիտեր ամուսնու ճաշակով լինելը:

Ապրեց մի աչքը փակ, մի ականջը խուլ, բայց էն մի աչքն ու ականջն էլ լիուլի բավ էր, որ տեսներ ու լսեր ճաշակի վայրիվերումները: Ի՞նչ աներ, նամուսի գերի էր դարձել. տանը օրիորդներ էին մեծանում, հայր էր պետք, դաշնամուր, երաժշտական դպրոց էր պետք, հագ ու կապ ու վերջապես օժիտ էր պետք: Ումի՞ց էին պակաս, լավ հայր ու մայր ունեին, լիքը տուն էին, դրսից՝ անտեղյակ նայողները տիրոջը երանի էին տալիս: Ներսը ներսիններին էին վառել, դուրսն էլ՝ դրսիններին: Փո՞ղ էիր սիրում: Դե, ա՛ռ: Ամեն ինչ տեղը տեղին, դրամը՝ առատ հոսող առու, լիքը սեղաններն ու հյուրասիրվողները՝ անպակաս, միայն հասցրու, եփի-թափի, դիր ու վերցրու: Մնացածի հետ գործ չունի. տաբու է: Ինչ ուզում՝ անում, ում ուզում՝ վայելում: Ապրեցին՝ սևը ներս, ճերմակը դուրս արած: Կինը զգացմունքները սանձած, ամուսինը՝ սանձարձակ ու ինքնակամ: Երեխաներին մեծացրին: Թոռնեին էլ մեծացրին: Մնացին մեն մենակ, աչք աչքի, ճակատ ճակատի՝ կյանքին դեմ հանդիման: Ամուսինը շատ էր ինքնամսխվել, ու էլ սիրտը չէր հերիքում. աչքը կնոջ ձեռքին էր ու բարեհաճությանը: Բայց ինչպե՞ս հանդուրժեր, տղամարդ էր, կինն էլ դեռ անող-դնող, ժիր կուկլեմ: Ինքն էլ չհասկացավ՝ ինչպես դարձավ անհանդուրժող խանդի տեր: Եթե կնոջը թվում էր, թե օր ծերության հանգիստ կգտնի, կապրեն երկուսով, մեկը մյուսի համար, ապա չարաչար սխալվում էր: Սկսվեց իր կյանքը ուտել-մաշելու երկրորդ արարը: Ի՞նչ էին ուզում իրարից ու կյանքից, իրենք էլ չգիտեին: Միայն թե կինը ողբում ու ետ էր պահանջում կորսված ջահելությունն ու բուժքրոջ մասնագիտությունը, ամուսինն էլ չհասկացված, չգնահատված լինելը:

Ամուսինը դարձավ բուժքույր կնոջ վերջին հիվանդը: Գամված էր անկողնում, հիմա ուզենար էլ՝ ոչինչ չէր կարող անել: Ցոփ ու շվայտ կյանքը անհաջող վրձնահարվածներ էին թողել դեմքին, իսկ կինը նրա աչքերի պղտոր հայելում տեսնում էր լրբերի խաղացկուն աչքերի արտացոլանքը, որոնք հանդգնաբար կողոպտել էին իր ընտանեկան անդորը: Մարմնի կապույտները դեռ ոչի՜նչ. մի կերպ կդիմանար, բայց լո՜ւռ նվվում էր հոգու կապույտը: Մեջն արթնացել էր սատանան, և խղճի խայթ կամ գութ զգալու փոխարեն միայն չարանում էր ու չարանում: Միասնական կյանքի երկարուձիգ ճանապարհին ամուսնուն հաջողվել էր կնոջ մեջ իսպառ ջնջել բուժքրոջը: Եվ այն վերջին՝ ճակատագրական օրը, երբ հիվանդը ամենաշատն էր զգում օգնության կարիք, կինը գնում էր ու գալիս, դեղի մի սրվակը վերցնում էր, մյուսը՝ դնում: Կինը ամեն բան անում էր, բուժքույրն էր, որ ոչինչ չարեց…

Երկու օր. մե՛կ կռվեց, մե՛կ բարիշեց, մի աչքով լացեց /էն, որ փակ էր պահել/, մյուսով՝ չարախնդաց: Վերջին հանգրվան ուղեկցեց՝ չուզենալով՝ մի տեսակ լավություն անողի նման: Հետո՞… հետոն հարմար էր… մտքի եկածն ու լեզվի ծայրից դուրս պրծածը շպրտում էր պատից կախ՝ ամուսնու նկարի երեսին: Ի՞նչ կարող էր անել. լո՜ւռ հանդուրժում ու զարմանում էր՝ չճանաչելով իր համեստ, իր կուկլա տիկնոջը:

Ի՞ՆՉ Է ՍԵՐԸ

Հայրս հողին ի պահ էր տվել մորս: Անդադար խոսում էր, բարձր էր խոսում: Գլուխը չէր կախում, չէր խեղճանում, ուժեղ, տղամարդավարի, ոչ մի կաթիլ արցունք… Երբ ներսի սափորը պռնկեպռունկվեց, ճաք չտալու համար… երգեց.

…Պառավ յարս թանկ է, թանկ…

Ոմանք զարմացած՝ չհասկացան, ում տրված էր հասկանալու կարողություն՝ լո՜ւռ արտասվեց:

Այդ օրվանից ևս ինը հարյուր օր ապրեց չապրելու նման, ամեն օր ինը հարյուր անգամ հիշեցնելով, որ առանց թանկ կեսի սուտ է կյանքը: Վաթսուն տարի միասին: Կատակ բան չէ:

Աստծո ամենամեծ պարգևը սերն է, ավելի ճիշտ՝ սիրելու ունակությունը: Ամեն մեկին տրված չէ այդ շնորհը, ամեն ոք չի տիրապետում սիրելու արվեստին: Ցանկացած տաղանդ պիտի վերևներից օրհնված լինի:

ՍՏԵՓԱՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ԱՃՊԱՐԱՐԸ

Ա՛յ քեզ հրաշք, ա՛յ հրաշք,
Զարմացել է ամեն աչք,
Ասպարեզում զարդարված՝
Աճպարարն է մեր դիմաց:
Ինչեր ասես չի անում...
Քթից ձվեր է հանում
Ու պատրաստում ձվածեղ,
Առանց կրակ՝ հենց այստեղ:
Ի՞նչ մեկ, ի՞նչ յոթ, ի՞նչ քսան,
Փոքրիկները փսփսան
Իրար հրում են՝ նայե՛ք,
Աճպարար է, իմացե՛ք:
-Բայց այդքան ձու որտեղի՞ց,
Որ հանում է նա քթից,
Գլորում է, ծիծաղում,
Շարում կողքի կողովում:
Ահա ձուն էլ վերջացավ,
Մի քիչ բամբակ նա կերավ,
Հետո բացեց բերանը...
Ու քար կտրեց Միհրանը.
-Տե՛ս, տե՛ս, ինչեր է անում,
Ժապավենն է նա հանում՝
Կարմիր, դեղին ու կանաչ,
Զարմանում է հազար աչք:
Ի՞նչ մեկ, ի՞նչ յոթ, ի՞նչ քսան,
Փոքրիկները փսփսան
Իրար հրում են՝ նայե՛ք,
Աճպարար է, իմացե՛ք...
Իսկ ձեռնածուն շատ արագ
Դեմքին ծիծաղ ու կատակ,
Գրպաններն է շուռ տալիս
Ինչ-որ բան է ման գալիս,
Մատն է պարզում դեպի ցած,
Որտեղ մենք ենք լուռ նստած:
Իսկույն ինձ է մոտենում,
Ձեռքը գրպանն է տանում
Ու հանում է հավի ճուտ
Հետն էլ՝ փոքրիկ երկու մուկ:
Ցույց է տալիս բոլորին,
Դնում գրպանը կրկին:
Ուղիղ երկու քայլ արեց,
Մենք նայեցինք վեր ու վար,
Գրպաններում բան չկար:
Ուրախացանք, ծափ տվինք,
Հենց այդ ծափի ժամանակ
Գրպաններից նա արագ,
Որ մեզ դատարկ էր թվում,
Ծիտիկներ է դուրս հանում:
-Ի՞նչ մեկ, ի՞նչ յոթ, ի՞նչ քսան,
Փոքրիկները փսփսան
Իրար հրում են՝ նայե՛ք,
Աճպարար է, իմացե՛ք...
Բերին երկար մի աման,
Ասես լիներ մեծ բանան:
Շուռ-մուռ տվեց շատ անգամ,
Բայց չերևաց ոչ մի բան:
Ու այդ ամանի վրա
Մի մեծ սփռոց գցեց նա:
Հետո սփռոցը հանեց,
Ողջ դահլիճը ցնցվեց,
Թռան վերև ճախրանքով
Աղավնիները հերթով,
-Ի՞նչ մեկ, ի՞նչ յոթ, ի՞նչ քսան,
Փոքրիկները փսփսան
Իրար հրում են՝ նայե՛ք,
Աճպարար է, իմացե՛ք...

ՊԱՊԻ ԴԵՂԸ

Պապը ասաց՝ հիվանդ եմ,
Մի դե՛ղ արեք՝ լավանամ,
Վահանը թե՝ շուտ զանգեմ,
Թող օգնության շտապ գան:

Տատը խնդաց քթի տակ.
- Պապի դեղը ես գիտեմ,
Իր ծննդյան օրն է,
Կուզի, որ ես համբուրեմ:

ՀՈԳՆԱԾ ՊԱՐԱՆԸ

Տեսե՛ք, տեսե՛ք Մարանը
Ամուր բռնել պարանը,
Շնչակտուր խաղում է
Ու ոչ ոքի չի տալիս:
Մոտ է գալիս Նաիրան,
-Տո՛ւր մի քիչ էլ ես խաղամ:
-Չէ՛,- ասում է Մարանը-
Շատ է հոգնել պարանը:

ՏԱՏԻ ԽՐԱՏԸ

Տատը ուներ մի հավիկ,
Օրմեջ ածում էր ձվիկ,
Որը թոռնիկն էր ուտում,
Տատին բաժին չէր մնում:
Թոռան գութը շարժվեց,
Մի օր դարձավ թե՝ ա՛յ տատ,
Դու հավիկի հետ խոսիր,
Թե կարող ես համոզիր,
Թող նա մի լավ մտածի՝
Երկուական ձու ածի:
Մեկը նորից կուտեմ ես,
Իսկ մյուսը՝ բաժին քեզ:
Տատը խնդաց քթի տակ,
Ասաց,- լսի՛ր, ա՛յ Արտակ,
Ով կերել է ձուն թասի,
Թող հավին էլ նա ասի:

ՏԱԿԱՌՈՎ ՇՆԻԿԸ

Մի օր պապը մտավ մառան,
Տեսավ՝ ընկած տակառ կա հին,
Գրկեց ու դուրս հանեց նրան,
Որ չմնա մութ անկյունում:

Սուր կացինը գնաց բերեց,
Որ կոտորի փայտերն հերթով,
Հանկարծ թռը տեսավ, վազեց,
Մի բան անցավ նրա մտքով:
-Պա՛պ, տեսնում ես, որ մեր շունը
Անձրևին դուրսն է մնում,
Հենց տակառն էլ կլինի բույն,
Ներկենք, դառնա տեսքով,
սիրուն:

Պապն հավանեց թոռան մտքին.
«Խելքի ծով է այս երեխան»,
Այդ օրվանից տակառը հին
Կլոր տունն է մեր դռան շան:

ՍՐՏԻ ԴԵՂԸ

Տատը բերեց սև չամիչ,
Լցրեց բուռը Արշակի.
- Անուշ արա դու քիչ-քիչ,
Որ սիրտդ լավ աշխատի:

Սրտի դեղ է չամիչը,-
Ասաց տատը խրատով,
Ու մի բուռ էլ նա կերավ,
Անուշ-անուշ խնդալով:

ՁՄԵՐՈՒԿ Է

-Զա՛ն, ես գտա ձմերուկ.-
Ճստճստում է մի գող մուկ.-
Շալակեմ ու տուն տանեմ,
Ուտեմ, հետն էլ խաղ անեմ...

-Ո՞նց կտանես, այ գող մուկ,
Ձմերուկ է, ձմերուկ...
Հո ցորեն չի մի պստիկ,
Քեզ կճզմի, այ ճստիկ:

ԿԱՐԱՊԵՏ ԴՈՒՐԳԱՐՅԱՆԻ «ՏԱՍՆՀԻՆԳ ՏԱՐԻ ԴԺՈՒՔԻ ՈԼՈՐՏՆԵՐՈՎ (1941-1956 ԹԹ.)» ՀՈՒՇԱՊԱՏՄԱՆ ՇՈՒՐՋ

Նշանավոր բանասեր Կարապետ Դուրգարյանը մեծանուն գիտնական, բանահավաք և ազգագրագետ Աղեքսանդր Մխիթարյանցի թոռն է: Կ. Դուրգարյանի մահից հետո (1988թ.) նրա կինը՝ Եկատերինա Դուրգարյանը, Աղ. Մխիթարյանցի արխիվի հետ բանասերի արխիվը նույնպես հանձնել է «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանին: Կ. Դուրգարյանի արխիվը բաղկացած է փաստաղթերից, լուսանկարներից, բանաստեղծություններ ամփոփող ձեռագիր գրքույկներից և հուշապատումից: Այսօր, երբ Գյումրու մտավորականությունը հատկապես հետաքրքրված է Կ. Դուրգարյանի հուշապատմամբ, արդիական ենք համարում հոդվածաշարով այն ներկայացնել հայ հասարակությանը: Հուշապատումը գրվել է 1967 թ. Լենինականում և պատում է Կ. Դուրգարյանի 1941-1956թթ. ապրած կյանքի տարիների մասին: 1965թ. ազգային զարթոնքից հետո հայ մտավորականների մեջ միտում է նկատվում գրել թե՛ Հայոց ցեղասպանության, թե՛ Ստալինյան բռնաճնշումների, թե՛ Հայրենական մեծ պատերազմի մասին: Այս հորձանուտի մեջ է հայտնվում նաև մտավորական Կ.Դուրգարյանը, որ իր հուշապատումը վերնագրում է «Տասնհինգ տարի դժոխքի ոլորտներով (1941-1956թթ.)»: Վերնագիրը խոսում է այն տառապանքների մասին, որոնցով անցել է հայ մտավորականը՝ հայտնվելով խորհրդային բանտերում և ենթարկվելով բռնաճնշումների: Հուշապատումը բաղկացած է երեք ձեռագիր գրքերից, որոնք ամփոփում են մոտ 700 էջ, ուստի սույն հոդվածի շրջանակներում հնարավոր է սեղմ անդրադառնալ միայն հուշապատման առաջին գրքին, որն սկսվում է Ավետիք Իսահակյանի և Եղիշեի խոսքերով: «Պարտական էղնիս, թե չգրես...» խոսքերը պատկանում են Ավ. Իսահակյանին, որից ենթադրում ենք, որ Դուրգարյանը հուշապատումը գրել է Վարպետի խորհրդով, ապա Եղիշեի խոսքերն են՝ «Ահա ոչ ըստ կամաց արտօստրալիր ողբովք...»:

Հուշապատման «Գիրք առաջինը» ամփոփում է 1941-1944 թթ., բաղկացած է 22 գլուխներից և 481 էջից: Գիրքն ունի «Բովանդակություն» բաժինը, որի վերջնամասում հեղինակը գրում է, որ առաջին գրքի շարադրանքը ավարտել է 1969 թ. դեկտեմբերի 5-ին, հետևաբար առաջին գրքի շարադրանքը տևել է մոտ երեք տարի: Առաջին տողերից էլ պարզ է դառնում այն հանգամանքը, թե ինչու Կ. Դուրգարյանը իր վերապրած տարիները համեմատում է դժոխքի հետ. «Դժոխքը, որի ոլորտներով անցել են միլիոնավոր մարդիկ, շատերն անդարձ ու անվերադարձ, հիմնականում տարբերվում է քրիստոնեական կամ կրոնական հասկացությամբ ստեղծված մտացածին դժոխքից,- գրում է նա, -նախ այս դժոխքը իրական է, ստեղծված երկրի վրա, ուր մարդիկ ապրում են մեռնելով, ապրում են սարսափով, խոսում են սարսափով, քնում են սարսափով: Բացի դրանից, քրիստոնեական դժոխքը հորինված է մեղավորների համար, իսկ սա անմեղների, արդարների, ազնիվ մարդկանց համար... Ընդհանուրն այն է, որ երկու դժոխքներն էլ տանջանքի համար են»: Ահա այսպես է բնորոշում նա այս շրջանում ապրող մտավորականի կյանքը:

Ինգա ԱՎԱԳՅԱՆ
Պատմ. գիտ. թեկն., դոցենտ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԳՄ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՀԵՏ ՀՈԳԵԲՈՒԽ ԽՈՍՔԵՐ

Գյումրու պետական բժշկական քոլեջը սովորական ուսումնական հաստատություն չէ. դրա պատերի ներսում ձևավորվում են ոչ միայն ապագա բուժաշխատողներ, այլև մարդիկ, որոնք կյանքին նայում են սրտով, հոգով, նվիրումով: Մեր օրերը իմաստավորված են դասերով, գիտելիքով, նոր բացահայտումներով, բայց երբ մեր քոլեջում հյուրընկալեցինք մեր քաղաքի բանաստեղծներին, այդ օրը կարծես մթնոլորտը փոխվեց: Թվում էր՝ մեր քոլեջի պատերը սովոր էին լսել բժշկական տերմիններ, վիրահատական տեխնիկայի մասին դասախոսություններ, բայց այդ օրը ներսում թևածում էր պոեզիան՝ բեկվող, ապրող, ներշնչող:

Մենք, ձեռքներումս թերթերը պահած, անհամբեր սպասում էինք: Նախապես ընթերցել էինք «Եղեգան փող» հանդեսում տպագրված ստեղծագործությունները, բայց դրանք մինչ այդ պարզապես բառեր էին՝ առանց ձայնի, առանց դեմքերի: Իսկ հիմա մեր առջև նստելու էին հենց այդ բառերի հեղինակները, նրանք, ովքեր հոգու խորքում պահած ապրումները հանձնել էին թղթին:

Դահլիճում լռություն էր, բայց դա սովորական լռություն չէր. այն լցված էր ակնկալիքով, հետաքրքրությամբ, ինչ-որ թաքնված շնչով, որը տարածվել էր օդում: Բարձր կուրսեցիները հերթով ներկայացրին բանաստեղծների գործերը, իսկ հետո խոսքը տրվեց հենց նրանց: Մեկը կարդում էր իր ստեղծագործությունները հզոր, ինքնավստահ ձայնով, մյուսը՝ ավելի մեղմ ու զգացմունքային, բայց բոլորի խոսքում կար մի ընդհանուր բան՝ անկեղծություն:

Երբ հնարավորություն տրվեց հարցեր տալու, ես մի պահ երկմտեցի: Բայց հետո հավաքեցի համարձակությունս ու հարցրի.

- Շատ եմ ցանկանում իմանալ, թե ո՛վ կամ ի՛նչն է ձեր գրչին ուժ տալիս, որովհետև ձեր խոսքերը կարծես հոգուց բխեն:

Բանաստեղծուհին նայեց ինձ, ժպտաց, ու նրա աչքերում մի պահ փայլեց հիշողությունների լույսը: Նա սկսեց պատմել իր մանկության մասին, այն պահերի, որոնք ձևավորել էին իրեն որպես գրող: Ես հասկացա, որ գրականությունը պարզապես բառերի համադրություն չէ. այն ապրելու, զգալու, վերապրելու և նորից համահաղորդվելու ձև է:

Այդ օրը ինձ համար ոչ թե պարզապես հանդիպում էր, այլ մի դուռ, որը բացվեց դեպի նոր աշխարհ՝ այն աշխարհը, որտեղ բառերը պարզապես չեն գրվում, այլ ծնվում են, ապրում են մարդու ներսում, մինչև որ գտնում են իրենց ճիշտ տեղը թղթի վրա: Եվ գուցե մի օր ես էլ գտնեմ այն, ինչ իմ գրչին ուժ կտա:

Ինեսա ՀԱԿՈԲՅԱՆ

Հրատարակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ:

Լրատվական գործունեությունն իրականացնող՝
Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային
մասնաճյուղ:
Հասցեն՝ Շիրակի մարզ, Գյումրի, Գորկու 62
Վկայական N 01Բ 001543

տրված է 21.03.2005թ.
հեռ. (094) 53 44 64
Խմբագրական խորհուրդ
Գլխավոր խմբագիր՝
Ռոզա Հովհաննիսյան

Համակարգչային ձևավորումը՝ «Էլդորադո Պրինտ» ՍՊԸ
Տպագրված է «Վան Արյան» հրատարակչատան
տպարանում
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ